

**ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱԺՈՂՈՎ**

Փաստաթղթերի ժողովածու

Եվրոպական հարեւանության քաղաքականության արեւելյան գործընկեր երկրներում ընթացող բարեփոխումները պահանջում են քաղաքացիական հասարակության ավելի ակտիվ մասնակցություն:

2009թ. նոյեմբերի 16-17-ին Բրյուսելում կայացած Քաղաքացիական հասարակության համաժողովի հիմնական խնդիրը քաղաքացիական հասարակության հնարավորություններն Արեւելյան գործընկերության նպատակներին հասնելու համար օգտագործել էր:

Սույն ժողովածուում ամփոփված Քաղաքացիական հասարակության համաժողովի նախապատրաստմանը, անցկացմանը եւ հետագա գործունեությանն առնչվող փաստաթղթերը կոչված են օգնելու ԵՄ գերատեսչությունների, անդամ պետությունների եւ Արեւելյան գործընկերության (ԱԷԳ) 6 երկրների ղեկավարությունների հիմնական ինստիտուցիոնալ գործընկերները հանդիսացող քաղաքացիական հասարակության կազմակերպություններին՝ երկկողմ եւ բազմակողմ մակարդակով ԱԷԳ ծրագրերի նախագծման, իրականացման, մոնիտորինգի եւ գնահատման հարցերում:

Ծրագրի տնօրեն՝ **Բորիս Նավասարդյան**
Խմբագիր՝ **Յերիքնազ Չարությունյան**
Թարգմանիչ՝ **Խանդութ Բաղդասարյան**

**FRIEDRICH
EBERT
STIFTUNG**

Ծրագրին եւ սույն հրատարակությանն աջակցել է Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամը

© Երեւանի մամուլի ակումբ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

| | |
|--|----|
| Արեւելյան գործընկերության Քաղաքացիական հասարակության համաժողովի ստեղծման վերաբերյալ ԶԶԿ-ների եւ ՀԿ-ների հետ անցկացված խորհրդակցությունների արդյունքները | 5 |
| Արեւելյան գործընկերության Քաղաքացիական հասարակության համաժողով. Հայեցակարգային փաստաթուղթ | 10 |
| Արեւելյան գործընկերության Քաղաքացիական հասարակության համաժողովին մասնակցության հայտ ներկայացնելու կոչի արդյունքները եւ 2009թ. նոյեմբերի 16-17-ին Բրյուսելում Համաժողովի կայացմանն ուղղված քայլերը | 17 |
| Արեւելյան գործընկերության Քաղաքացիական հասարակության համաժողովի Ղեկավար կոմիտեի հանդիպումը. արդյունքները եւ 2009թ. նոյեմբերի 16-17-ին Բրյուսելում Համաժողովի կայացմանն ուղղված քայլերը | 20 |
| Արեւելյան գործընկերության Քաղաքացիական հասարակության 2009թ. նոյեմբերի 16-17-ը Բրյուսելում կայացած համաժողովի մասնակից ԶԶԿ-ների ցանկ | 23 |
| Արեւելյան գործընկերության Քաղաքացիական հասարակության համաժողովի Ղեկավար կոմիտեի՝ 2009թ. նոյեմբերի 16-17-ը Բրյուսելում կայացած հանդիպմանն ընտրված անդամները | 29 |
| Արեւելյան գործընկերության Քաղաքացիական հասարակության համաժողով. Բրյուսել, 16-17 նոյեմբերի, 2009թ. Պրն Ս. Մացկելվիչի՝ Արտաքին գործերի նախարարներին ուղղված ելույթը | 31 |
| Արեւելյան գործընկերության Քաղաքացիական հասարակության համաժողով. (Բրյուսել, 16-17 նոյեմբերի, 2009թ.) Առաջարկություններ. Աշխատանքային խումբ 1. Ժողովրդավարություն, մարդու իրավունքներ, արդյունավետ կառավարում եւ կայունություն | 37 |
| Արեւելյան գործընկերության Քաղաքացիական հասարակության համաժողով. (Բրյուսել, 16-17 նոյեմբերի, 2009թ.) Առաջարկություններ. Աշխատանքային խումբ 2. Տնտեսական ինտեգրացում եւ համապատասխանություն ԵՄ քաղաքականությանը | 45 |

| | |
|---|----|
| Արեւելյան գործընկերության Քաղաքացիական հասարակության համաժողով. (Բրյուսել, 16-17 նոյեմբերի, 2009թ.) Առաջարկություններ. Աշխատանքային խումբ 3. Բնապահպանություն, կլիմայական փոփոխություններ եւ էներգետիկ անվտանգություն | 49 |
| Արեւելյան գործընկերության Քաղաքացիական հասարակության համաժողով. (Բրյուսել, 16-17 նոյեմբերի, 2009). Առաջարկություններ. Աշխատանքային խումբ 4. Միջանձնային շփումներ | 54 |
| Արեւելյան գործընկերության Քաղաքացիական հասարակության համաժողով. Առաջարկություններ Համաժողովի եւ Ղեկավար կոմիտեի աշխատանքի վերաբերյալ. Բրյուսել, 28 նոյեմբերի, 2009թ. | 59 |
| Արեւելյան գործընկերության Քաղաքացիական հասարակության համաժողովի ընդգրկվածությունն ապահովելուն ուղղված Եվրոպական հանձնաժողովի առաջարկությունները. Բրյուսել, 15 հունվարի, 2010թ. | 61 |

Արեւելյան գործընկերության Քաղաքացիական հասարակության համաժողովի ստեղծման վերաբերյալ ԶԻԿ-ների եւ ՀԿ-ների հետ անցկացված խորհրդակցությունների արդյունքները

1. Ներածություն

Եվրոպական հանձնաժողովը (ԵՀ) 2008թ. դեկտեմբերի 3-ին Արեւելյան գործընկերությանը նվիրված իր հաղորդագրությունում հանդես է եկել «Արեւելյան գործընկերության Քաղաքացիական հասարակության համաժողով» ստեղծելու առաջարկով՝ ԶԻԿ-ների միջեւ շփումները եւ հանրային իշխանությունների հետ նրանց երկխոսությունը խթանելու նպատակով: Արեւելյան գործընկերության գազաթաժողովը 2009թ. մայիսի 7-ին հաստատել է Հանձնաժողովի հնչեցրած առաջարկը եւ համատեղ հայտարարությունում կոչ արել Եվրոպական հանձնաժողովին՝ «մշակել եւ առաջարկել Արեւելյան գործընկերության¹ Քաղաքացիական հասարակության համաժողովի ստեղծման ձեւաչափը»:

Այդ գործընթացի թափանցիկությունն ապահովելու նպատակով բոլոր շահագրգիռ կողմերը հրավիրվել են Եվրոպական հանձնաժողովի արտաքին կապերի եւ գործընկեր երկրներում՝ ԵՀ պատվիրակության կայքէջերում իրենց կարծիքն արտահայտելու:

Կոչն ուղղվել է «Արեւելյան գործընկերության համաժողովի վերաբերյալ կարծիքների արտահայտում» խորագրի ներքո եւ առկա է եղել անգլերեն, ֆրանսերեն եւ ռուսերեն լեզուներով: Այն առաջարկել է կարծիք արտահայտել մի քանի հարցերի վերաբերյալ.

- ԶԻԿ ավանդը ԱԼԳ նպատակների իրագործման հարցում
- Մասնակցություն ԶԻԿ աշխատանքներին
- ԶԻԿ կառույցները եւ նրանց կապերը ԱԼԳ բազմակողմ ուղղությունների հետ
- ԵՀ դերն այս գործընթացում:

Խորհրդակցությունները սկսվել են 2009թ. մարտի վերջին եւ ավարտվել ապրիլի 25-ին: Ստացվել է մոտ 40 հայտ՝ հիմնականում ԱԼԳ երկրներում գործող քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, ինչպես նաեւ ԵՄ ներկայացուցչական մի շարք կառույցների կողմից:

Եվրոպայի տնտեսական եւ սոցիալական կոմիտեն մայիսի 13-ին ընդունված՝ «Քաղաքացիական հասարակության ներգրավվածությունն Արեւելյան գործընկերությունում»² իր որոշման մեջ շեղմորեն ողջունել է ԵՀ առաջարկը՝ հիմնելու ԱԼԳ ԶԻԿ եւ, իր փորձառությունից եւ գիտելիքներից ելնելով, ցանկություն է հայտնել առանցքային դեր ստանձնել այս նախաձեռնությունում: Առաջարկվում է, որ ԶԻԿ-ի նիստերը տեղի ունենան առնվազն տարեկան մեկ անգամ հաճախականությամբ, եւ ԱԼԳ ոլորտների մակարդակում հարցերի որոշակի խմբերի անդրադառնալու համար ստեղծվեն աշխատանքային խմբեր: ԶԻԿ-ին հնարավորություն կընձեռվի նաեւ «մշակել առաջարկություններ եւ հանձնարարականներ ԵՄ ներկայացուցիչների եւ գործընկեր երկրների կառավարությունների համար»: Սույն փաստաթղթի նպատակը ստացված հայտերի

¹ http://www.consilium.europa.eu/uedocs/cms_data/docs/pressdata/en/er/107589.pdf

² http://eescopinions.eesc.europa.eu/EESCopinionDocument.aspx?identifier=ces\r\rex271\ces889-2009_ac.doc&language=EN

վերլուծությունն է: Այն ներկայացնում է նաեւ Հանձնաժողովի կատարած ընտրության մեթոդները եւ ընտրության գործընթացներում կիրառվող չափանիշները:

2. Քաղաքացիական հասարակության համաժողովի մասնակցությունն Արեւելյան գործընկերության նպատակների իրականացմանը

Համաժողովի դերը

Հարցված կողմերի համաձայն՝ ԶՀՀ-ը պետք է նպաստի Արեւելյան գործընկերության նպատակների իրականացմանը հետեւյալ միջոցներով.

- խթանելով ԶՀԿ-ների միջեւ ցանցերի ստեղծումը եւ ուժեղացնելով դրանց դերն Արեւելյան գործընկերության երկրներում.
- տեխնիկական աջակցություն ցուցաբերելով ԱԼԳ երկկողմ եւ բազմակողմ գործունեությանը.
- Արեւելյան գործընկերության երկրներում տարածելով ԵՄ/ԵՀԶ/ԱԼԳ սկզբունքներն ու արժեքները:

ԶՀՀ գործունեության շրջանակները

Մասնակից հարցված կողմերը նշել են գործունեության բազմաթիվ բնագավառներ: Ի հավելումն ժողովրդավարության, մարդու իրավունքների եւ միջանձնային շփումների ոլորտների, մի շարք ԶՀԿ-ներ այն կարծիքն են հայտնել, որ Համաժողովը պետք է իր ներդրումն ունենա նաեւ տնտեսական եւ սոցիալական ոլորտներում: Էներգետիկ քաղաքականության վերաբերյալ որեւէ նշում չի արվել, սակայն այս հարցին թերեւս կարելի է անդրադառնալ բնապահպանության եւ կլիմայական փոփոխությունների խնդիրների հետ համատեղ:

3. Մասնակիցների ընտրություն եւ ընտրության գործընթացը

Հարցմանը մասնակցած կողմերը նախապատվությունը տվել են համընդգրկուն մոտեցմանը, ինչը թույլ կտա ապահովել ԶՀԿ-ների լայն շրջանակի մասնակցությունը, այդ թվում՝ առեւտրային միությունները, աշխատանքային միությունները, մասնագիտական միավորումները, ՀԿ-ները, հանրային քաղաքականության ինստիտուտները (think-tank organizations), շահույթ չհետապնդող հիմնադրամները, ազգային եւ միջազգային ԶՀԿ-ները/ցանցերը եւ նման այլ կազմակերպություններ:

Մինչ մասնակիցների մի մասը նշել է փոքր եւ միջին ԶՀԿ-ներին ներգրավելու անհրաժեշտությունը (քանի որ նրանք ավելի մոտ են տեղի բնակչությանը, եւ այդպիսով նրանց հնարավորություն կընձեռնվի ինտեգրվել քաղաքացիական հասարակության ցանցերին), մյուսները նախապատվությունը տվել են ազգային եւ/կամ անդրազգային ԶՀԿ-ներին: Մի քանի ԶՀԿ-ներ հանդես են եկել երրորդ երկրներից դիմումներ ընդունելու առաջարկով:

Հանձնաժողովը համակարծիք է, որ ԶՀՀ-ին պետք է մասնակցի ԶՀԿ-ների լայն շրջանակ ԱԼԳ երկրներից, ինչպես նաեւ ԵՄ անդամ պետություններից եւ միջազգային կազմակերպություններից/ցանցերից:

Մասնակիցների ընտրության գործընթացի վերաբերյալ հարցման արդյունքում ձեւավորվել է երեք տարբերակ.

- ընտրությունն ԵՅ-ի կողմից՝ ըստ որոշակի չափանիշների.
- ընտրություններ յուրաքանչյուր երկրում՝ կազմակերպված հենց ԶՅԿ-ների կողմից.
- բաց մասնակցություն, այսինքն՝ ԵՅ-ի կողմից գրանցվելու հրապարակային կոչի հղում:

Մասնավորապես, ընդունելի առաջարկ է հնչել՝ նախ ստեղծել ԱԼԳ երկրների, ԵՄ անդամ պետությունների, երրորդ երկրների եւ անդրազգային ԶՅԿ-ների/ցանցերի շահագրգիռ ԶՅԿ-ների տվյալների շտեմարան (ԵՅ-ի կողմից հայտեր ներկայացնելու կոչի հիման վրա), որից հետո անցնել ընտրության երկրորդ փուլին:

Նկատի ունենալով, որ 1) ԵՅ-ի կողմից ընտրության կատարումը չի համապատասխանի ԶՅԿ-ի՝ բաց լինելու սկզբունքին, 2) յուրաքանչյուր երկրում հենց իրենց՝ ԶՅԿ-ների կողմից ընտրության անցկացումը գործնական տեսակետից հարմար լուծում չէ, 3) հաշվի առնելով նշյալ կազմակերպության բազմաբնույթ հատկությունը եւ 4) տարբերելով իրավիճակները ԱԼԳ գործընկեր երկրներում եւ ԵՄ անդամ պետություններում, Յանձնաժողովն առաջարկում է հետեւյալ ընթացակարգը.

ԱԼԳ ԶՅԿ-ին մասնակցության հայտի ներկայացում, որին կհաջորդի թափանցիկության սկզբունքի վրա հիմնված ընտրությունը՝ ներքոնշյալ չափանիշներով.

Առաջարկվել են ընտրության բազմաթիվ չափանիշներ: **Ստորեւ այն չափանիշներն են, որոնք Յանձնաժողովը հաշվի կառնի.**

- **Աշխարհագրական ծածում/ազգություն** - ԶՅԿ մասնակիցների մեծամասնությունը պետք է լինի ԱԼԳ գործընկեր երկրների ԶՅԿ անդամ (եւ յուրաքանչյուր գործընկեր երկրի համար պետք է պահպանվի նրանց թվաքանակի հավասարակշռությունը): Բացի այդ, մասնակիցների զգալի մասը պետք է լինի ԵՄ անդամ պետություններից եւ միջազգային կազմակերպություններից/ցանցերից, ինչը թույլ կտա ապահովել փորձի փոխանակումը ԵՄ-ի հետ կապված հարցերի/ռազմավարության վերաբերյալ (քանի որ ԱԼԳ հիմնական նպատակներից մեկն Արեւելյան գործընկերության երկրները ԵՄ-ին մոտեցնելն է): Կարող են հրավիրվել նաեւ ԶՅԿ-ներ երրորդ երկրներից:
- **Բազմազանություն եւ համամասնություն** - մասնակիցները պետք է ներկայացնեն ամենատարբեր ոլորտներում գործող ԶՅԿ-ներ (առեւտրային միություններ, աշխատանքային միությունները, մասնագիտական միավորումներ, ՅԿ-ներ, հանրային քաղաքականության ինստիտուտներ (think-tank organizations), շահույթ չհետապնդող հիմնադրամներ, ազգային եւ միջազգային ԶՅԿ-ներ/ցանցեր եւ նման այլ մասնակիցներ): Նրանք պետք է ի վիճակի լինեն իրենց ավանդը ներդնել ԱԼԳ բոլոր թեմատիկ ոլորտներում, որոնք են՝ 1. Ժողովրդավարություն, արդյունավետ կառավարում եւ կայունություն, 2. Տնտեսական ինտեգրացում եւ համապատասխանություն ԵՄ քաղաքականությանը, 3. Բնապահպանություն, կլիմայական փոփոխություններ եւ էներգետիկ անվտանգություն, 4. Միջանձնային շփումներ:
- **Փորձառություն ԵՄ/ԵՅԶ/ԱԼԳ առնչվող հարցերում** (հաշվի առնելով անցյալ եւ ներկա գործունեությունը եւ ձեռքբերումները):

Ընտրության վերոնշյալ չափանիշները կիրառելով հանդերձ՝ Յանձնաժողովը հաշվի կառնի նաեւ յուրաքանչյուր գործընկեր երկրի առանձնահատկությունները:

Մասնակից կազմակերպությունները պետք է պատրաստակամություն հայտնեն իրենց նպաստը բերելու ԱԳ նպատակների իրականացմանը: Որոշ կազմակերպություններ կարող են ցանկություն եւ հնարավորություն ունենալ ինքնուրույն հոգալու ԶՀ մասնակցության հետ կապված իրենց ծախսերը, սակայն դա ընտրության համար չափանիշ չի համարվի:

4. ԶՀ կառուցվածքը եւ նրա փոխգործակցությունը ԱԳ բազմակողմ կառույցների հետ

ԶՀ կառուցվածքը

Համաձայնություն է ձեռք բերվել ԶՀ ժողովները պարբերական ընդմիջումներով անցկացնելու շուրջ (տարեկան մեկ անգամ հաճախականությամբ): Հարցված ԶՀ-ները միակարծիք էին նաեւ ԱԳ բազմակողմ ուղղությունն արտացոլող թեմատիկ աշխատանքային խմբերի ստեղծման վերաբերյալ: Ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող մյուս հարցը ԶՀ ինտերնետային կայքի եւ ցանցի ստեղծումն էր:

Հարցման մասնակիցները ապակենտրոնացված կառույցի կողմնակից էին: Որպես կենտրոնական կառավարման մոդել՝ որոշ մասնակիցներ կողմ են արտահայտվել քարտուղարության եւ/կամ գործադիր մարմնի ստեղծմանը, որը կղեկավարվի հենց ԶՀ-ների կողմից (ԵՅ օժանդակությամբ): Տեղական մակարդակով՝ կողմերը ցանկություն են հայտնել ստեղծելու ազգային կառույցների ցանց, որը հաշվետու կլինի ԶՀ կենտրոնական կառույցներին:

Փոխգործակցություն ԱԳ բազմակողմ կառույցների հետ

Կողմերն առաջարկել են փոխգործակցության հետեւյալ ձեւերը.

- մասնակցություն փորձի, գիտելիքների եւ լավագույն պրակտիկայի փոխանակման գործընթացին. սա պետք է ներառի նաեւ պլատֆորմների եւ/կամ նախարարական հանդիպումների աշխատանքային փաստաթղթերի մատչելիությունն ու հասանելիությունը.
- խորհրդատվության եւ առաջարկների տրամադրում պլատֆորմներին.
- պլատֆորմների գործունեության մոնիտորինգ եւ գնահատում, որի արդյունքները, ըստ հնարավորության, պետք է ներկայացվեն հանրային զեկույցների տեսքով.
- կարծիքների եւ տեսակետների արտահայտում, որոնք հաշվի կառնվեն համապատասխան թեմատիկ պլատֆորմներում եւ/կամ նախարարական հանդիպումներում:

Որոշ մասնակիցներ առաջարկել են «համակարգողների» նշանակում, որոնք պատասխանատու կլինեն ԶՀ եւ ԱԳ բազմակողմ կառույցների միջեւ շփումների համար: Կարծիք է հայտնվել նաեւ, որ ԶՀ-ը «ֆիզիկապես» ներկայացված լինի ԱԳ բազմակողմ հանդիպումներին՝ դիտորդի կարգավիճակով:

5. Եվրոպական հանձնաժողովի դերը

Մասնակիցներն ընդհանուր առմամբ կողմնակից էին, որ ԵՀ-ը կարելուք դերակատարում ստանձնի այս գործընթացներում, ոչ միայն դրա սկզբնական

փուլերում, այլեւ հետագայում եւս: ԶՅՅ մեկնարկի առնչությամբ՝ համընդհանուր համաձայնությամբ առաջին նիստի կազմակերպիչը ԵՅ-ը պետք է լինի: Որոշ մասնակիցներ առաջարկել են նաեւ, որպեսզի ԵՅ-ը ստանձնի ԶՅՅ աշխատանքային օրակարգի եւ դրա նպատակների հստակեցման աշխատանքները: Հետագայի համար առաջարկվել է, որ ԵՅ-ն իրականացնի հետեւյալ գործառույթները.

- Համաժողովի նիստերին եւ գործունեությանը ֆինանսական, գաղափարական եւ տեխնիկական օժանդակության տրամադրում (ներառյալ աջակցություն փորձագիտական աշխատանքներին, մուտքի արտոնագրերի ստացման հարցում, ինտերնետային կայքէջի ղեկավարում եւ այլն).
- ԶՅՅ եւ ԱԼԳ պլատֆորմներով նախատեսված գործունեության համակարգում՝ անհրաժեշտ տեղեկատվության տրամադրման միջոցով.
- ԶՅՅ գործունեությանը քաղաքական օժանդակության տրամադրում (երկխոսություն տեղական իշխանությունների հետ, ԶՅՅ խթանում՝ որպես ԱԼԳ կարելորագույն գործիքի):

**ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ
Հայեցակարգային փաստաթուղթ**

1. Ներածություն

Քաղաքացիական հասարակությունը եւ հասարակական կազմակերպություններն առանցքային դեր են կատարում իրենց հասարակություններում՝ խթանելով ծրագրերը, իրականացնելով նոր նախաձեռնություններ եւ հաշվետու դարձնելով կառավարություններին: Նրանք կարող են ակտիվ մասնակցություն ունենալ ժողովրդավարական եւ ազատ շուկային միտված բարեփոխումների իրականացման գործում, որոնք հիմնված են համընդհանուր այնպիսի արժեքների վրա, ինչպիսիք են՝ հարգանքը ժողովրդավարության եւ մարդու իրավունքների հանդեպ, օրենքի գերակայությունը, արդյունավետ կառավարումը, շուկայական տնտեսության եւ կայուն զարգացման սկզբունքները: Այս արժեքներն ու նպատակներն է հետապնդում նաեւ Եվրոպական հարեւանության քաղաքականությունը, որի մեջ ընդգրկված է նորաստեղծ Արեւելյան գործընկերությունը՝ նախատեսված Արեւելյան Եվրոպայի երկրների՝ Հայաստանի, Ադրբեջանի, Բելառուսի, Վրաստանի, Մոլդովայի Հանրապետության եւ Ուկրաինայի համար:

Արեւելյան գործընկերությանը նվիրված իր հաղորդագրության³ մեջ Եվրոպական հանձնաժողովը մատնանշել է, որ «Եվրոպական հարեւանության քաղաքականության արեւելյան գործընկեր երկրներում ընթացող բարեփոխումները⁴ պահանջում են քաղաքացիական հասարակության ավելի ակտիվ մասնակցություն՝ հանրային ծառայությունների վերահսկումը խթանելու եւ նրանց հանդեպ հասարակության վստահությունն ամրապնդելու նպատակով: Այդ իսկ պատճառով ԱԳ նախաձեռնությունում քաղաքացիական հասարակության ներգրավման խնդիրը հատուկ ուշադրության պետք է արժանանա»:

Հանձնաժողովն առաջարկել է «օժանդակել քաղաքացիական հասարակության հետագա զարգացման գործընթացին» եւ, մասնավորապես, «ստեղծել **Արեւելյան գործընկերության Քաղաքացիական հասարակության համաժողով**՝ ԶՀԿ-ների միջեւ շփումները խթանելու եւ հանրային իշխանությունների հետ նրանց երկխոսությունն ավելի դյուրին դարձնելու համար»: Հանձնաժողովը «Եվրոպական տնտեսական եւ սոցիալական կոմիտեին (ԵՏՍԿ) հրավիրել է մասնակցելու Քաղաքացիական հասարակության համաժողովին»:

ԱԳ թեմատիկ հարթությունների՝ պլատֆորմների հետ կապված՝ Հանձնաժողովը, որպես «Անվտանգություն եւ կայունություն» ոլորտի *ժողովրդավարության, արդյունավետ կառավարման եւ կայունության 1-ին պլատֆորմի* աշխատանքային ծրագրի հնարավոր խնդիր, առաջարկել է «կազմակերպել շփումներ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների միջեւ՝ նրանց քարոզչական կարողությունները բարելավելու եւ երկարատեւ հակամարտությունների գոտիներում վստահության ամրապնդմանը նպաստելու նպատակով»:

³ COM(2008) 823, 3 December 2008; <http://eurlex.europa.eu/LexUriServ/LexUriServ.do?uri=COM:2008:0823:FIN:EN:PDF>;

⁴ SEC(2008) 2974/3 ; http://ec.europa.eu/external_relations/eastern/docs/sec08_2974_en.pdf

Մշակույթի ոլորտում Միջանձնային շփումների վերաբերյալ 4-րդ պլատֆորմի կապակցությամբ Հանձնաժողովն առաջարկել է «երիտասարդությանը համախմբել գործընկեր 6 երկրների գործողությունների ծրագրում: Սա կնպաստի երիտասարդների շարժունակությանը եւ նրանց միջեւ փոխանակումների իրականացմանը՝ խթանելով միջմշակութային երկխոսությունը եւ փոխըմբռնումը: Այն երիտասարդական ՅԿ-ներին կօժանդակի՝ գործընկեր երկրներում քաղաքացիական հասարակության առաջխաղացմանը նպաստելու գործում»:

Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ ավելի սերտ համագործակցություն է նախատեսվում նաեւ Առաջնահերթային նախաձեռնություն 5-ի շրջանակներում, որի խնդիրն է՝ *բնական եւ մարդկային գործուից առաջացած աղետների կանխումը, դրանց դիմակայումը եւ արձագանքումը:* Ավելին, քաղաքացիական հասարակությունը կարող է իր նպաստը բերել նաեւ *Տնտեսական ինտեգրացիայի եւ ԵՄ քաղաքականության համապատասխանության 2-րդ պլատֆորմով* նախատեսված խնդիրների լուծման հարցում:

Արեւելյան գործընկերության 2009թ. մայիսի 7-ի Պրահայի համատեղ հայտարարության մեջ նշվում է. «Պրահայի գագաթաժողովի մասնակիցները դիմում են Եվրոպական հանձնաժողովին՝ Արեւելյան գործընկերության Քաղաքացիական հասարակության համաժողովի ստեղծման⁵ ձեւերը մշակելու եւ առաջարկելու խնդրով»:

Այդ գործընթացի թափանցիկությունն ապահովելու նպատակով բոլոր շահագրգիռ կողմերը հրավիրվել են իրենց կարծիքն արտահայտելու Եվրոպական հանձնաժողովի արտաքին կապերի եւ գործընկեր երկրներում ԵՅ պատվիրակության կայքէջերում:

Կոչն ուղղվել է «Արեւելյան գործընկերության համաժողովի վերաբերյալ կարծիքների արտահայտում» խորագրի ներքո եւ առկա է եղել անգլերեն, ֆրանսերեն եւ ռուսերեն լեզուներով: Այն առաջարկել է կարծիք արտահայտել մի քանի հարցերի վերաբերյալ, որոնք են. 1. ԶՅՅ ավանդը ԱԼԳ նպատակների իրագործման հարցում, 2. Մասնակցություն ԶՅՅ աշխատանքներին, 3. ԶՅՅ կառույցները եւ նրանց կապերը ԱԼԳ բազմակողմ ուղղությունների հետ, 4. ԵՅ դերն այս գործընթացում:

Խորհրդակցությունները սկսվել են մարտի վերջին եւ ավարտվել ապրիլի 25-ին: Ստացվել է մոտ 40 հայտ, հիմնականում՝ ԱԼԳ երկրներում գործող քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից, բայց նաեւ՝ ԵՄ ներկայացուցչական մի շարք կազմակերպություններից:

Եվրոպայի տնտեսական եւ սոցիալական կոմիտեն մայիսի 13-ին ընդունված «Քաղաքացիական հասարակության ներգրավվածությունն Արեւելյան գործընկերությունում»⁶ իր որոշման մեջ շեղմորեն ողջունել է ԵՅ առաջարկը՝ հիմնելու ԱԼԳ ԶՅՅ եւ, իր փորձառությունից եւ գիտելիքներից ելնելով, ցանկություն է հայտնել առանցքային դեր ստանձնել այս նախաձեռնությունում: Ընդհանուր հավանության է արժանացել ի նպաստ «գործնական եւ ճկուն», ԵՄ եւ ԱԼԳ երկրների քաղաքացիական հասարակությունները միավորող ԶՅՅ-ի ստեղծման գաղափարը: Առաջարկվում է, որ ԶՅՅ-ի նիստերը տեղի ունենան առնվազն տարեկան մեկ անգամ հաճախականությամբ, եւ հարցերի որոշակի խմբերի անդրադառնալու համար ստեղծվեն աշխատանքային խմբեր: ԶՅՅ-ին հնարավորություն կընձեռվի նաեւ

⁵ http://www.consilium.europa.eu/uedocs/cms_data/docs/pressdata/en/er/107589.pdf

⁶ ամբողջական տեքստը՝ http://www.eesc.europa.eu/documents/opinions/avis_en.asp

«մշակել առաջարկություններ եւ հանձնարարականներ» ԵՄ ներկայացուցիչների եւ գործընկեր երկրների կառավարությունների համար:

2. Երկխոսություն քաղաքացիական հասարակության հետ Սեւծովյան համադաշնություն ծրագրի շրջանակներում

Սեւծովյան համադաշնություն (ՄԾՅ) ծրագրի շրջանակներում քաղաքացիական հասարակության հետ տարածաշրջանային երկխոսությունը խրախուսվել է թե՛ Յանձնաժողովի, թե՛ Ազգային (ռումինական) նախաձեռնության կողմից՝ ներգրավելով ԱԳ նախաձեռնությամբ հետաքրքրված երկրների մեծ մասին:

ՄԾՍ-ը սկզբից եւեթ գրավել է ՅԿ-ների ուշադրությունը. բնապահպանական հարցերով զբաղվող 29 հասարակական կազմակերպություններ 2008թ. փետրվարի 7-ին հանդիպել են Օդեսայում եւ ընդունել «Կանաչ Սեւծովյան համադաշնություն» փաստաթուղթը:

Արտահայտվելու ազատության վերաբերյալ ՄԾՅ առաջին սեմինարը, որ կազմակերպվել է Յանձնաժողովի կողմից, անցկացվել է 2008թ. մայիսի 19-20-ին, Քիշնեւում, եւ հյուրընկալվել Մոլդովայի արտաքին գործերի եւ Եվրոպական ինտեգրացիայի նախարարության կողմից: Ներկա է եղել շուրջ 90 մասնակից Սեւծովյան տարածաշրջանից (քաղաքացիական հասարակության եւ կառավարության ներկայացուցիչներ), ինչպես նաեւ ներկայացուցիչներ ԵԱՀԿ-ից, Եվրոպայի խորհրդից եւ միջազգային ՅԿ-ներից: Տեղի է ունեցել 4 թեմատիկ նիստ՝ միջազգային չափանիշների ուսումնասիրում, քրեական օրենսդրության հետ կապված հարցեր, տեղեկատվության մատչելիություն եւ մամուլի բազմակարծություն խորագրերով:

Յանձնաժողովը որոշել է հաջորդ սեմինարը նվիրել Սեւծովյան տարածաշրջանում իրավական օգնության եւ արդարադատության մատչելիության հարցերին եւ այն անցկացնել 2009թ. երկրորդ կեսին: Նախատեսվել են քննարկումները կազմակերպել՝ հիմք ընդունելով իրավական օգնության առկա փորձը եւ մարդու իրավունքների չափանիշները՝ խթանելով լավագույն փորձի փոխանակումը Սեւծովյան տարածաշրջանում:

Ինչ վերաբերում է ռումինական նախաձեռնությանը, 2008թ. հոկտեմբերի 31-ից նոյեմբերի 2-ը Բուխարեստում տեղի է ունեցել Սեւծովյան հասարակական կազմակերպությունների համաժողով՝ «Յանդիպելու ժամանակը» խորագրով, որը կազմակերպվել է Ռումինիայի արտաքին գործերի նախարարության, Սեւծովյան տարածաշրջանային համագործակցության հիմնադրամի եւ ՄԱԿ-ի Չարգացման Ռումինիայի գրասենյակի կողմից:

Համաժողովը միավորել է մոտ 100 տարբեր ՅԿ-ների (220 մասնակից) Սեւծովյան երկրներից, Բելառուսից, ԵՄ որոշ անդամ երկրներից եւ կառավարությունների ներկայացուցիչներից: Ստեղծվել է 3 փաստաթուղթ Սեւծովյան տարածաշրջանում ՅԿ-ների համագործակցության խնդրի վերաբերյալ, եւ տեղի են ունեցել քննարկումներ երեք ոլորտներում. 1. սոցիալական արդարություն եւ մարդու իրավունքներ, 2. ժողովրդավարություն եւ արդյունավետ կառավարում, 3. բնապահպանություն:

Թե՛ Սեւծովյան համադաշնության, թե՛ ԱԳ շրջանակներում Արեւելյան Եվրոպայի ու Հարավային Կովկասի երկրների հետ քաղաքացիական հասարակության երկխոսության առնչությամբ որոշվել է, որ երկու նախաձեռնությունն էլ պետք է

պահպանվեն եւ զուգահեռաբար շարունակեն իրենց գործունեությունը. ՍԾՅ ՀԿ Համաժողովը եւ ՍԾՅ սեմինարները խիստ թեմատիկ են եւ տարածաշրջանային ուղղվածություն ունեն, մինչդեռ ԱԼԳ Քաղաքացիական հասարակության համաժողովը պետք է կենտրոնանա ԱԼԳ եւ ԵՅԶ նպատակներին առնչվող գործունեության վրա՝ այդպիսով նպաստելով գործընկերների առավել մերձեցմանը Եվրոպային:

Հանձնաժողովը երկու համաժողովներում պետք է ձգտի համադաշնեցման՝ գործողությունների զուգահեռաբար խուսափելու համար:

3. ԱԼԳ Քաղաքացիական հասարակության համաժողով

1. Ինչպես կարող են Արեւելյան գործընկերության նպատակներն առաջ մղվել Քաղաքացիական հասարակության համաժողովի կողմից:

ՔՀՀ-ը պետք է նպաստի Արեւելյան գործընկերության նպատակների իրականացմանը՝

- աջակցելով ԱԼԳ կառավարական ուղղվածություն ունեցող գործունեությանը՝ հիմնականում առաջարկությունների պարբերական մշակման (ԱԼԳ աշխատանքների խթանում, գնահատում, մոնիտորինգ) եւ նախարարական ժողովներին ու բազմակողմ պլատֆորմներին մասնակցելու եւ դրանց օժանդակելու միջոցով.
- խթանելով ՔՀԿ-ների միջեւ երկխոսությունը, նպաստելով այլ խմբավորումների հետ (Եվրոպական տնտեսական եւ սոցիալական կոմիտե, սոցիալական գործընկերներ, ՀԿ-ներ, հանրային քաղաքականության ինստիտուտներ եւ այլն) դրանց ցանցավորմանը եւ փորձի ու լավագույն պրակտիկայի փոխանակմանը, աշխատելով ԱԼԳ եւ ԵՅԶ նպատակների հետ աղերսվող ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող հարցերի ուղղությամբ.
- կիսելով Եվրոպական ինտեգրման ոլորտում ունեցած փորձն ԱԼԳ երկրների հետ.
- քննարկելով ԱԼԳ բազմակողմ գործունեությունը խթանելու՝ քաղաքացիական հասարակության հնարավորությունները, այդ թվում՝ տարածաշրջանային հակամարտություններում վստահության ձեւավորմանն ուղղված միջոցառումները.
- զարգացնելով ԱԼԳ երկրների քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կարողությունները ԵՄ անդամ պետությունների եւ միջազգային կազմակերպությունների/ցանցերի հետ շփումների միջոցով.
- ստեղծելով ԱԼԳ գործընթացներում քաղաքացիական հասարակության կարծիքը եւ տեսակետները մշտապես հաշվի առնելու հնարավորություններ.
- նպաստելով հարաբերությունների հաստատմանը ԵՄ գերատեսչությունների հետ.
- Քաղաքացիական հասարակության համաժողովի միջոցով նպաստելով ազգային քաղաքացիական հասարակությունների ամրապնդմանը եւ նրանց երկխոսությանը ԱԼԳ գործընկեր երկրների իշխանությունների հետ.
- ուժեղացնելով ՔՀԿ-ների ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման դերը մասնավորապես այն ոլորտներում, որտեղ նրանք ունեն արժեքավոր գիտելիքներ եւ կարող են նպաստել ԱԼԳ նպատակների նվաճմանը՝ նաեւ ազգային մակարդակում:

II. Ինչպես պետք է որոշվի այս Համաժողովին մասնակցության հարցը:

- ԱԼԳ քաղաքացիական հասարակության համաժողովին անդամակցումը բաց պետք է լինի քաղաքացիական հասարակության կազմակերպությունների համար, որոնք են՝ կամավորական շարժումները (grass root organizations), առևտրային միությունները, աշխատանքային միությունները, մասնագիտական միավորումները, ՀԿ-ները, հանրային քաղաքականության ինստիտուտները (think-tank organizations), շահույթ չհետապնդող հիմնադրամները, ազգային եւ միջազգային ԶՀԿ-ները/ցանցերը եւ նման այլ մասնակիցներ ԱԼԳ երկրներից, բայց նաեւ՝ ԵՄ անդամ պետություններից եւ միջազգային կազմակերպություններից/ցանցերից: Կարող են հրավիրվել նաեւ ԶՀԿ-ներ երրորդ երկրներից: Եվրոպական տնտեսական եւ սոցիալական կոմիտեն եւ գործընկեր երկրներում դրան համազոր մարմինները պետք է առանցքային մասնակցություն ունենան հատկապես սոցիալական, բիզնեսի եւ աշխատանքի հետ կապված հարցերում:

Հանձնաժողովը նախապատվությունը տալիս է մասնակիցների ընտրության հետեւյալ կարգին.

ԱԼԳ ԶՀԿ-ին հղվում է մասնակցության հայտ, որին հաջորդում է թափանցիկության չափանիշների վրա հիմնված ընտրությունը, ինչպես նշված է ներքեւում.

- **Աշխարհագրական ծագում/ազգություն** - ԶՀԿ մասնակիցների մեծամասնությունը պետք է լինի ԱԼԳ գործընկեր երկրների ԶՀԿ անդամ (եւ յուրաքանչյուր գործընկեր երկրի համար պետք է պահպանվի նրանք թվաքանակի հավասարակշռությունը): Բացի այդ, մասնակիցների զգալի մասը պետք է լինի ԵՄ անդամ պետություններից եւ միջազգային կազմակերպություններից/ցանցերից, ինչը թույլ կտա ապահովել փորձի փոխանակումը ԵՄ-ի հետ կապված հարցերի/ռազմավարության վերաբերյալ (քանի որ ԱԼԳ հիմնական նպատակներից մեկն Արեւելյան գործընկերության երկրները ԵՄ-ին մոտեցնելն է): Կարող են հրավիրվել նաեւ ԶՀԿ-ներ երրորդ երկրներից:
- **Բազմազանություն եւ համամասնություն** - մասնակիցները պետք է ներկայացնեն ամենատարբեր ոլորտներում գործող ԶՀԿ-ներ (կամավորական շարժումներ (grass roots organizations), առևտրային միություններ, աշխատանքային միություններ, մասնագիտական միավորումներ, ՀԿ-ներ, հանրային քաղաքականության ինստիտուտներ (think-tank organizations), շահույթ չհետապնդող հիմնադրամներ, ազգային եւ միջազգային ԶՀԿ-ներ/ցանցեր եւ նման այլ մասնակիցներ): Նրանք պետք է ի վիճակի լինեն իրենց ավանդը ներդնել ԱԼԳ բոլոր թեմատիկ ոլորտներում, որոնք են՝ 1. Ժողովրդավարություն, արդյունավետ կառավարում եւ կայունություն, 2. Տնտեսական ինտեգրացում եւ համապատասխանություն ԵՄ քաղաքականությանը, 3. Բնապահպանություն, կլիմայական փոփոխություններ եւ էներգետիկ անվտանգություն, 4. Միջանձնային շփումներ:
- **Փորձառություն ԵՄ/ԵՀԶ/ԱԼԳ առնչվող հարցերում** (հաշվի առնելով անցյալ եւ ներկա գործունեությունը եւ ձեռքբերումները):

Ընտրության վերոնշյալ չափանիշները կիրառելով հանդերձ՝ Հանձնաժողովը հաշվի կառնի նաեւ յուրաքանչյուր գործընկեր երկրի յուրահատկությունները:

Մասնակից կազմակերպությունները պետք է պատրաստակամություն հայտնեն իրենց նպաստը բերելու ԱԳ նպատակների իրականացմանը:

Որոշ կազմակերպություններ կարող են ցանկություն եւ հնարավորություն ունենալ ինքնուրույն հոգալու ԶՅՅ մասնակցության հետ կապված իրենց ծախսերը, սակայն դա ընտրության համար չափանիշ չի համարվի:

III. Ինչպիսին պետք է լինի Համաժողովի կառուցվածքը, ինչպես այն պետք է փոխգործակցի ԱԳ այլ կառույցների հետ (պլատֆորմներ, պանելներ եւ այլն):

ԶՅՅ-ը կարող է գործակցել ԱԳ բազմակողմ կառույցների հետ հետեւյալ կերպ.

- մասնակցելով փորձի, գիտելիքների եւ լավագույն պրակտիկայի փոխանակման գործընթացին. սա պետք է ներառի նաեւ պլատֆորմների եւ/կամ նախարարական հանդիպումների աշխատանքային փաստաթղթերի մատչելիությունն ու հասանելիությունը,
- խորհրդատվություն եւ առաջարկներ տրամադրելով պլատֆորմներին,
- իրականացնելով պլատֆորմների գործունեության մոնիտորինգ եւ գնահատում, որի արդյունքները, ըստ հնարավորության, պետք է ներկայացվեն հանրային զեկույցների տեսքով,
- տրամադրելով գրավոր կարծիքներ եւ տեսակետներ, որոնց ուսումնասիրումը պարտադիր կլինի համապատասխան թեմատիկ պլատֆորմներում եւ/կամ նախարարական հանդիպումներում,
- հրավերի առկայության դեպքում, հանձնիս ընտրված ներկայացուցիչների, մասնակցելով պլատֆորմների, նախարարական հանդիպումների եւ ԱԳ գազաթափոցների աշխատանքներին:

ԱԳ Զաղաքացիական հասարակության համաժողովը պետք է լիազումար նիստեր եւ ժողովներ գումարի պարբերական ընդմիջումներով, առնվազն տարեկան մեկ անգամ:

Թեմատիկ աշխատանքային խմբերը կարող են ստեղծվել՝ արտացոլելով ԱԳ բազմակողմ առաջնահերթությունները, որոնք են՝ 1. Ժողովրդավարություն, արդյունավետ կառավարում եւ կայունություն, 2. Տնտեսական ինտեգրացում եւ համապատասխանություն ԵՄ քաղաքականությանը, 3. Բնապահպանություն, կլիմայական փոփոխություններ եւ էներգետիկ անվտանգություն, 4. Միջանձնային շփումներ:

Այս խմբերը որոշակի ժամկետներով կարող են նշանակել իրենց համակարգողներին: Վերջիններս պետք է լինեն ԱԳ գործընկեր երկրների քաղաքացիներ: Ապագայում Նրանք պետք է Հանձնաժողովի աջակցությամբ ղեկավարեն ԶՅՅ լիազումար նիստերի նախապատրաստման աշխատանքները եւ համանախագահեն ԶՅՅ ժողովները: Նրանք նաեւ պետք է նիստերի միջեւ ընկած ժամանակահատվածներում համակարգեն եւ կազմակերպեն ԶՅՅ աշխատանքները:

Ցանկալի կլինի, որպեսզի ԶՅՅ համակարգողները հրավիրվեն մասնակցելու ԱԳ բազմակողմ պլատֆորմների հանդիպումներին, որտեղ կկարողանան զեկույցել ԶՅՅ գործունեության վերաբերյալ եւ ներկայացնել ԶՅՅ առաջարկությունները: Նրանք կարող են հրավիրվել նաեւ ԱԳ նախարարական ժողովներին եւ ԱԳ գազաթափոցներին: Ժողովրդավարության, արդյունավետ կառավարման եւ

կայունության աշխատանքային խմբի համակարգողը կարող է հանդես գալ նաև որպես ԶՀ «խոսնակ»⁷:

ԶՀ կառուցվածքի եւ գործունեության վերջնական ձեւավորումը տեղի կունենա ԵՀ-ի՝ 2009թ. նոյեմբերի կեսերին Բոյուսելում կայանալիք կոնֆերանսի ժամանակ:

IV. Ինչ դերակատարում պետք է ունենա Եվրոպական հանձնաժողովը Համաժողովի ստեղծման եւ դրա աշխատանքների իրականացման գործում:

Եվրոպական հանձնաժողովը ԵՄ նախագահության եւ ԵՏՍԿ-ի հետ համատեղ կկազմակերպի ԱԼԳ ԶՀ առաջին հանդիպումը, որը տեղի կունենա 2009թ. նոյեմբերի կեսերին, Բոյուսելում: Հետագայում ԶԿ-ներն իրենք կստանձնեն ԶՀ գործունեության պատասխանատվությունը, եւ ԵՀ-ը կնպաստի, որ ԱԼԳ Զաղաքացիական հասարակության համաժողովը դառնա ինքնակազմակերպվող կառույց: Հանձնաժողովը պետք է ստեղծի Ղեկավար կոմիտե եւ դրա աշխատանքներում ներգրավի ԵՄ նախագահությանը, ԵՏՍԿ--ին եւ անկախ փորձագետների: Ղեկավար կոմիտեն կստանձնի նաեւ ԶՀ մասնակիցների արագ ընտրության գործընթացի պատասխանատվությունը:

Ժամանակի ընթացքում ԵՀ դերը կհասցվի նվազագույնի, որը կկայանա հետեւյալում.

- Համաժողովի հավաքներին եւ գործունեությանը ֆինանսական, գաղափարական եւ տեխնիկական օժանդակության տրամադրում (ներառյալ՝ աջակցություն փորձագիտական աշխատանքներին, մուտքի արտոնագրերի ստացման հարցում եւ այլն).
- ԶՀ եւ ԱԼԳ պլատֆորմներով նախատեսված գործունեության համակարգում՝ հիմնականում՝ անհրաժեշտ տեղեկատվության տրամադրման միջոցով.
- ԶՀ գործունեությանը քաղաքական օժանդակության տրամադրում (երկխոսություն տեղական իշխանությունների հետ, ԶՀ խթանում՝ որպես ԱԼԳ կարելորագույն գործիքի):

⁷ Սրանով չի բացառվում հնարավորությունը, որ բացի համակարգողներից, ԶԿ այլ ներկայացուցիչներ եւ մասնակիցներ եւս հրավիրվեն՝ որպես պլատֆորմների, նախարարական հանդիպումների եւ ԱԼԳ գագաթաժողովների ժամանակավոր մասնակիցներ:

**Արեւելյան գործընկերության Քաղաքացիական հասարակության
համաժողովին մասնակցության հայտ ներկայացնելու կոչի
արդյունքները եւ 2009թ. նոյեմբերի 16-17-ին Բրյուսելում
Համաժողովի կայացմանն ուղղված քայլերը**

2009թ. հունիսի 29-ին Եվրոպական հանձնաժողովը հրավիրել է շահագրգիռ կողմերին՝ կամավորական շարժումներին (grass roots organizations), առեւտրային միություններին, աշխատանքային միություններին, մասնագիտական միավորումներին, ՀԿ-ներին, հանրային քաղաքականության ինստիտուտներին (think-tank organizations), շահույթ չհետապնդող հիմնադրամներին, ազգային եւ միջազգային ԶՀԿ-ներին/ցանցերին եւ նման այլ կազմակերպությունների՝ հայտ ներկայացնելու ԱԳ Քաղաքացիական հասարակության համաժողովին⁸ (ԶՀՀ) մասնակցելու համար:

Համաժողովի ստեղծման առաջարկը բարձրացվել է Հանձնաժողովի՝ 2008թ. դեկտեմբերի 3-ի՝ Արեւելյան գործընկերությանը նվիրված հաղորդագրությունում⁹:

Արեւելյան գործընկերության գազաթաժողովը 2009թ. մայիսի 7-ին հաստատել է Հանձնաժողովի հնչեցրած առաջարկը եւ համատեղ հայտարարությունում կոչ արել Եվրոպական հանձնաժողովին՝ «մշակել եւ առաջարկել Արեւելյան գործընկերության Քաղաքացիական հասարակության համաժողովի ստեղծման ձեւաչափը»: 2009թ. հունիսի 29-ին Հանձնաժողովը ներկայացրել է դրա վերաբերյալ իր հայեցակարգային փաստաթուղթը եւ զուգահեռաբար բոլոր շահագրգիռ կողմերին հրավիրել մինչեւ 2009թ. օգոստոսի 31-ն արտահայտել իրենց կամքը ԶՀՀ-ին մասնակցելու համար: Ցուցաբերված մեծ հետաքրքրության եւ օգոստոսի վերջին օրերին ներկայացված մեծաթիվ հայտերի արդյունքում **վերջնաժամկետը երկարաձգվել է մինչեւ 2009թ. սեպտեմբերի 3-ը**: Հայտերը ներկայացվել են **RELEX-D1-EAP-CIVIL-SOCIETY@ec.europa.eu** էլեկտրոնային փոստի հասցեով, սեպտեմբերի առաջին օրերին:

Սույն փաստաթղթում ներկայացված են կոչի արդյունքները եւ դրանց հակիրճ վերլուծությունը: Այն տեղեկացնում է նաեւ ԱԳ ԶՀՀ առաջին հանդիպման կայացմանն ուղղված քայլերի մասին:

**Ընդհանուր առմամբ, մինչեւ երկարաձգված վերջնաժամկետը ստացվել է 439 հայտ:
Սա ապացուցում է քաղաքացիական հասարակության ակնհայտ
հետաքրքրվածությունն Արեւելյան գործընկերությամբ:**

Ստացվել են հետեւյալ հայտերը.

| | | |
|----------|---|----|
| Հայաստան | - | 50 |
| Ադրբեջան | - | 69 |
| Բելառուս | - | 76 |
| Վրաստան | - | 30 |
| Մոլդովա | - | 30 |

⁸ http://ec.europa.eu/external_relations/eastern/civil_society/docs/invite_en.pdf

⁹ <http://eur-lex.europa.eu/LexUriServ/LexUriServ.do?uri=CELEX:52008DC0823:EN:NOT>

Համաժողովի ստեղծման գործընթացի թափանցիկությունն ապահովելու նպատակով Հանձնաժողովն իր հայեցակարգային փաստաթղթում առաջարկել է՝ «ԱԼԳ ԶՀՀ-ի հիմնադրման համար ստեղծել Ղեկավար կոմիտե եւ դրա աշխատանքներում ընդգրկել ԵՄ նախագահությանը, Եվրոպական տնտեսական եւ սոցիալական կոմիտեին եւ ճանաչված անկախ փորձագետների»: Ղեկավար կոմիտեն կստանձնի նաեւ ԶՀՀ մասնակիցների արագ ընտրության պատասխանատվությունը եւ կաշակցի ԶՀՀ առաջին գումարման աշխատանքներին:

Ղեկավար կոմիտեն հիմնադրվել է 2009թ. սեպտեմբերի 11-ին: Նրանում ընդգրկված են Եվրոպական հանձնաժողովի պաշտոնյաներից, ԵՄ նախագահության եւ ԵՏՍԿ ներկայացուցիչներ եւ անկախ փորձագետներ՝ Ալեքսանդր Դուլեբան, Հիթեր Գրաբբը եւ Էուգենիուս Սմոլարը¹⁰:

**2009թ. սեպտեմբերի 23-ին Բրուսելում Ղեկավար կոմիտեն
Համաժողովի շուրջ 200 մասնակիցներից կկատարի ընտրություն՝
հայեցակարգային փաստաթղթում ամրագրված չափանիշներով.**

- աշխարհագրական ծագում/ազգություն
- բազմազանություն եւ համամասնություն
- փորձառություն ԵՄ/ԵՀԶ/ԱԼԳ առնչվող հարցերում:

Ընտրության վերոնշյալ չափանիշները կիրառելով հանդերձ՝ Հանձնաժողովը հաշվի կառնի նաեւ գործընկեր յուրաքանչյուր երկրի առանձնահատկությունները:

Անկախ փորձագետները Ղեկավար կոմիտեում չեն ներկայացնի այն կազմակերպությունները, որոնց պատկանում են, եւ զերծ կմնան ԱԼԳ ԶՀՀ-ին այդ կազմակերպությունների հնարավոր մասնակցության շուրջ ընթացող քննարկումներից:

Ղեկավար կոմիտեի խորհրդով Հանձնաժողովը ընտրված կազմակերպություններին կիրավորի մասնակցելու ԱԼԳ ԶՀՀ-ին: Բացի այդ, կոմիտեն կքննարկի իր առաջին հանդիպման ընթացքում առաջարկված ԱԼԳ ԶՀՀ ծրագրի նախագիծը: Հետագայում այս ծրագիրը կիրառարակվի: ԱԼԳ ԶՀՀ-ի աշխատանքներին օգնելու նպատակով Ղեկավար կոմիտեն կարող է առաջարկել նաեւ՝ ընտրել «աջակիցների» խումբ:

**Արեւելյան գործընկերության Զաղաքացիական հասարակության
համաժողովը կհանդիպի Բրյուսելում, Նոյեմբերի 16-17-ը,
Եվրոպական հանձնաժողովի, ԵՄ նախագահության եւ
Եվրոպայի տնտեսական եւ սոցիալական կոմիտեի հովանու ներքո:**

Համաժողովի ընթացքում, հայեցակարգային փաստաթղթում նշված առաջակի համաձայն, կարող են ստեղծվել **թեմատիկ աշխատանքային խմբեր**, որոնք

¹⁰ Որպես անկախ փորձագետներ՝ նրանք Ղեկավար կոմիտեում չեն ներկայացնի այն կազմակերպությունները, որոնց պատկանում են, ինչպես նաեւ չեն մասնակցի ԱԼԳ ԶՀՀ-ին այդ կազմակերպությունների հնարավոր մասնակցության վերաբերյալ քննարկումներին:

կարտացուլեն ԱԼԳ բազմակողմ ուղղվածության գերակայությունները, որոնք են՝
1. Ժողովրդավարություն, արդյունավետ կառավարում եւ կայունություն, 2.
Տնտեսական ինտեգրացում եւ համապատասխանություն ԵՄ քաղաքականությանը,
3. Բնապահպանություն, կլիմայական փոփոխություններ եւ էներգետիկ
անվտանգություն, 4. Միջանձնային շփումներ:

Համաժողովի կառուցվածքի վերաբերյալ վերջնական որոշումը կախված կլինի հենց
մասնակիցներից: Եթե Համաժողովը որոշի առաջարկություններ ընդունել ԱԼԳ
բազմակողմ ուղղությունների վերաբերյալ (թեմատիկ պլատֆորմներ, ԱԼԳ Արտաքին
գործերի նախարարներ), ապա դրանք համապատասխանաբար կփոխանցվեն
հասցեատերերին:

ԿԱՐԵՎՈՐ ՆՇՈՒՄ

Բյուջետային սահմանափակումների հետեւանքով Հանձնաժողովն ի վիճակի կլինի
հոգալ միայն ԱԼԳ երկրների ԶՀԿ-ների ճանապարհորդության եւ կեցության
ծախսերը: **ԵՅ-ն չի կարողանա հոգալ ԵՄ անդամ պետությունների, միջազգային
կազմակերպությունների, ցանցերի կամ երրորդ երկրների ԶՀԿ-ների որեւէ ծախս:**

Մեկնաբանությունները կարող են ուղարկվել RELEX-D1-EAP-CIVIL-SOCIETY@ec.europa.eu հասցեով:

**Արեւելյան գործընկերության Քաղաքացիական
հասարակության համաժողովի Ղեկավար կոմիտեի
հանդիպումը. արդյունքները եւ 2009թ. նոյեմբերի 16-17-ին
Բրյուսելում Համաժողովի կայացմանն ուղղված քայլերը**

Արեւելյան գործընկերության (ԱԳ) Քաղաքացիական հասարակության համաժողովի (ԶՀ) Ղեկավար կոմիտեն, որը նախագահում է Եվրոպական հանձնաժողովը, հանդիպել է Բրյուսելում, 2009թ. սեպտեմբերի 23-ին: Կոմիտեի կազմում ընդգրկված էին ներկայացուցիչներ Եվրոպայի Միության Շվեդիայի նախագահությունից, Հանձնաժողովից, Եվրոպայի տնտեսական եւ սոցիալական կոմիտեից, ինչպես նաեւ անկախ փորձագետներ:

Ցուցաբերված հետաքրքրության գնահատում

Ամփոփելով Հանձնաժողովի կողմից տարբեր Քաղաքացիական հասարակության կազմակերպություններից (ԶՀ) ստացված 439 հայտերի ուսումնասիրումը՝ Ղեկավար կոմիտեն հանձնարարական է ուղղել Հանձնաժողովին՝ 220 կազմակերպությունների ներկայացուցիչների հրավիրել մասնակցելու նոյեմբերի 16-17-ին Բրյուսելում կայանալիք ԱԳ Քաղաքացիական հասարակության համաժողովին: Այդ կազմակերպությունները կներկայացնեն հիմնականում ԱԳ երկրները, ինչպես նաեւ ԵՄ անդամ պետությունները, միջազգային կազմակերպություններն ու ցանցերը եւ երրորդ երկրները: Ընտրությունը կատարելիս հիմք է ընդունվել Հանձնաժողովի ներկայացրած հայեցակարգային փաստաթուղթը, որն առաջնորդվել է հետեւյալ չափանիշներով.

- **Աշխարհագրական ծածում/ազգություն** - ԶՀ մասնակիցների մեծամասնությունը՝ թվով 141, պետք է ներկայացնի ԱԳ գործընկեր երկրների ԶՀ-ները: Բացի այդ, մասնակիցների մի զգալի մաս՝ թվով 79 հոգի, կլինեն ԵՄ անդամ պետություններից եւ միջազգային կազմակերպություններից/ցանցերից ու երրորդ երկրներից:
- **Բազմազանություն եւ համամասնություն** - մասնակիցները պետք է ներկայացնեն ամենատարբեր ոլորտներում գործող ԶՀ-ներ. կամավորական շարժումներ (grass root organizations), առետրային միություններ, աշխատանքային միությունները, մասնագիտական միավորումներ, ՀՀ-ներ, հանրային քաղաքականության ինստիտուտներ, շահույթ չհետապնդող հիմնադրամներ, ազգային եւ միջազգային ԶՀ-ներ/ցանցեր եւ նման այլ մասնակիցներ): Ակնկալվում է, որ նրանք իրենց ավանդը կներդնեն ԱԳ բոլոր թեմատիկ ոլորտներում, որոնք են՝ 1. Ժողովրդավարություն, արդյունավետ կառավարում եւ կայունություն, 2. Տնտեսական ինտեգրացում եւ համապատասխանություն ԵՄ քաղաքականությանը, 3. Բնապահպանություն, կլիմայական փոփոխություններ եւ էներգետիկ անվտանգություն, 4. Միջանձնային շփումներ:
- **Փորձառություն ԵՄ/ԵՀԶ/ԱԳ առնչվող հարցերում** (հաշվի առնելով անցյալ եւ ներկա գործունեությունը եւ ձեռքբերումները):

Ընտրության գործընթացում վերոնշյալ չափանիշները կիրառելով հանդերձ՝ Հանձնաժողովը հաշվի կառնի նաեւ գործընկեր յուրաքանչյուր երկրի առանձնահատկությունները:

Յուրաքանչյուր երկրից հրավիրված ԶՅԿ-ների թվաքանակի պատկերը հետևյալն է.

| | |
|--------------------------|----|
| Հայաստան - | 21 |
| Ադրբեջան - | 21 |
| Բելառուս - | 27 |
| Վրաստան - | 22 |
| Մոլդովա - | 20 |
| Ուկրաինա - | 30 |
| ԵՄ անդամ պետություններ - | 47 |
| Երրորդ երկրներ - | 5 |

Հանձնաժողովը որոշում է կայացրել՝ հետեւել Ղեկավար կոմիտեի հանձնարարականներին եւ հաստատել առաջարկված բոլոր ԶՅԿ-ների մասնակցությունը:

Այլ հարցեր

Ընտրված կազմակերպությունների ցանկը չի հրապարակվի, այնուամենայնիվ, Համաժողովի նիստին բոլոր մասնակիցների ցուցակը հասանելի կլինի: Ընտրված յուրաքանչյուր կազմակերպություն կստանա 2009թ. նոյեմբերի 16-17-ը Բրյուսելի Համաժողովին ներկա գտնվելու անհատական հրավեր **միայն մեկ մասնակցի համար:**

Հանձնաժողովը մտադիր է հոգալ ԱԳ երկրներից ժամանած մասնակիցների ճանապարհորդության եւ հյուրանոցային ծախսերը, եթե նրանք իրենց հայտերում չեն հայտարարել այդ ծախսերը հոգալու իրենց պատրաստակամության մասին:

ԵՅ-ն չի հոգա ԵՄ անդամ պետությունների, միջազգային կազմակերպությունների, ցանցերի կամ երրորդ երկրների ԶՅԿ-ների որեւէ ծախս: Այդ պատճառով Հանձնաժողովն այդ կազմակերպություններին հրավեր ուղղելիս կպահանջի, որպեսզի նրանք անհապաղ հաստատեն իրենց մասնակցությունը: Եթե այդ կազմակերպություններից որեւէ մեկը որոշի չմասնակցել Համաժողովի նիստին, նրա փոխարեն կհրավիրվի հայտ ներկայացրած մեկ այլ կազմակերպություն:

Ղեկավար կոմիտեն դիմել է Հանձնաժողովին՝ ԱԳ ԶՅՅ գործընթացի համընդհանուր ընդգրկվածությունն ապահովելու համար համապատասխան առաջարկներ մշակելու խնդրանքով: Օրինակ, առաջարկվում է Բրյուսելի մեկնարկային հանդիպումից հետո Համաժողով ընդունել ավելի մեծ թվով մասնակիցների կամ օգտվել ԶՅԿ-ների ներկայացրած բոլոր հայտերից՝ անկախ ԶՅՅ-ին նրանց հրավիրված լինելու փաստից:

Հանձնաժողովը Ղեկավար կոմիտեին հայտնել է 2010թ. աշնանը նախատեսվող ԱԳ ԶՅՅ հաջորդ հանդիպմանը տեխնիկապես եւ ֆինանսապես աջակցելու իր պատրաստակամության մասին: Ավելին, Հանձնաժողովը պատրաստ է աջակցել (տեխնիկապես եւ ֆինանսապես) ԶՅՅ բոլոր չորս աշխատանքային խմբերի 2010թ. հանդիպումներին՝ դրանց ստեղծվելու պարագայում:

Վերջում Ղեկավար կոմիտեն ընդունել է Հանձնաժողովի առաջարկը՝ նշանակելու ԱԳ ԶՅՅ «աջակիցների», որոնք մասնակիցներին կօգնեն նախապատրաստվել Համաժողովի մեկնարկային հանդիպմանը:

Ընտրվել են.

1. Պրն Էուջենիուս Սմոլար, անկախ փորձագետ - Ժողովրդավարություն, արդյունավետ կառավարում եւ կայունություն.

2. Պրն Իվան Վոլս, ԵՏՍԿ անդամ - Տնտեսական ինտեգրացում եւ համապատասխանություն ԵՄ քաղաքականությանը.

3. Պրն Ալեքսանդր Դուլեբա, անկախ փորձագետ - Բնապահպանություն, կլիմայական փոփոխություններ եւ էներգետիկ անվտանգություն.

4. Տկն Յիթեր Գրաբբ, անկախ փորձագետ - Միջանձնային շփումներ:

ԱլԳ Զաղաքացիական հասարակության համաժողովին առնչվող նամակագրությունը կարող է իրականացվել RELEX-D1-EAP-CIVIL-SOCIETY@ec.europa.eu.
Էլեկտրոնային փոստով:

**ԱՐԵՎԵՅԱՆ գործընկերության Քաղաքացիական
հասարակության 2009թ. նոյեմբերի 16-17-ը
Բրյուսելում կայացած համաժողովի
մասնակից ԶՅԿ-ների ցանկ¹¹**

ԱԼԳ ԵՐԿՐՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆ

«Ասպարեզ» լրագրողական ակումբ ՀԿ
Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայաստանյան
մասնաճյուղ
Գլոբալիզացիայի եւ տարածաշրջանային համագործակցության վերլուծական կենտրոն
Երեւանի մամուլի ակումբ
Եվրասիա համագործակցություն հիմնադրամ
Եվրոպական ինտեգրացում ՀԿ
Թրանսփարենսի Ինթերնեշնլ
Հայաստանի Եվրոպական շարժում
Հայաստանի կովկասյան ինստիտուտ
Հայաստանի հելսինկյան կոմիտե
Հայաստանի միջեկեղեցական բարեգործական Կլոր սեղան հիմնադրամ
Հայաստանի պետական ծառայողների միավորում
Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ
Մամուլի աջակցության Ինտերնյուս հասարակական կազակերպության
Մարդկային զարգացման միջազգային կենտրոն (ICHD)
Սեւծովյան հասարակական կազմակերպությունների միջազգային միություն
Սպառողների իրավունքների պաշտպանություն ՀԿ
Փոքր եւ միջին բիզնեսի հիմնադրամ
Քաղաքացիական հասարակության զարգացման կենտրոն
Քաղաքացիական հասարակության գործընկերության ցանց
21-րդ դարի առաջնորդների ֆորում

ԱՂՐԲԵՋԱՆ

Ազգային եւ միջազգային հետազոտությունների կենտրոն
Ադրբեջանի փաստաբանների կոնֆեդերացիա
Ադրբեջանի կրթական հասարակության Գյանջայի տարածաշրջանային կենտրոնի «Բիլիկ»
կազմակերպություն
Գյանջայի ազոբիզնեսի միավորում
Գյանջայի Եվրոատլանտյան տեղեկատվական կենտրոն
Եվրոպական առեւտրի եւ արդյունաբերության պալատ (EEIG)
Ընտրությունների մոնիտորինգի եւ Ժողովրդավարական հետազոտությունների կենտրոն
Թրանսփարենսի Ինթերնեշնլ
Իրավական կրթության միություն
Լրագրողների ազատության եւ անվտանգության ինստիտուտ
Խղճի եւ հավատքի ազատության պաշտպանության կենտրոն (DEVAMM)
Կանանց իրավունքների պաշտպանության Դ. Ալիեւայի անվան ասոցիացիա
Կովկասյան հետազոտությունների ռեսուրսների կենտրոն

¹¹ Միջազգային կազմակերպությունների/ցանցերի համար նշվել է այն երկիրը, որտեղ գտնվում է քարտուղարությունը:

Հումանիտար հետազոտությունների կենտրոն
Մարդու իրավունքների կենտրոն
Շրջանավարտների ցանց
Սոցիալական զարգացման աջակցության «Praxis» հասարակական միավորում
Տնտեսական և սոցիալական զարգացման կենտրոն
Տնտեսական հետազոտությունների կենտրոն
«Ecolex-Azerbaijan» բնապահպանական օրենսդրության կենտրոն

ԲԵԼԱՌՈՒՄ

Ազատության շարժում (Ալիաքսանդր Միլինկեիչ)
Բելառուսի անկախ սոցիոլոգիական հետազոտությունների ՀԿ - ՆՈՎԱԿ լաբորատորիա
Բելառուսի ժողովրդավարամետ ՀԿ-ների միություն
Բելառուսի լրագրողների միություն
Բելառուսի առևտրային միությունների ֆեդերացիա (FTUB)
Բելառուսի առևտրի և արդյունաբերության պալատ
Բելառուսի հանքագործների, քիմիկոսների, նավթի վերամշակողների, տրանսպորտային աշխատողների, շինարարների անկախ առևտրային միություն Բելառուսի հելսինկյան կոմիտե
Բելառուսի ռազմավարական հետազոտությունների ինստիտուտ
Բելառուսի Ռոբերտ Շումանի անվան ասոցիացիա
Երիտասարդական Ճակատ
Եվրաբելառուս
Եվրոպական և տրանսատլանտյան հետազոտությունների կենտրոն
Էկոտուն հասարակական ասոցիացիա
Էկոնախագիծ
«Լեւ Սապիեհա» հիմնադրամ
«Խարտիա 97» քաղաքացիական նախաձեռնություն
«Կանաչ ցանց»
Կին իրավաբանների բելառուսական ասոցիացիա
Հենասայլակներ օգտագործողների ազգային միավորում
Սոցիալական նորարարությունների կենտրոն
«Վեսնա» մարդու իրավունքների կենտրոն
Տարածաշրջանային զարգացման BelARDA միավորում
Քաղաքացիական ֆորում
«POST» կրթական կենտրոն հասարակական միություն
RADA երիտասարդների և երեխաների հասարակական միավորումների խորհուրդ
«34 Multimedia Magazine»

ՄՈԼԴՈՎԱ

Անկախ լրագրության կենտրոն
Անկախ ՉԼՄ-ների ասոցիացիա
Արտաքին քաղաքականության ասոցիացիա
Եվրասիա հիմնադրամ
Թրանսփարենսի Ինթերնեշլ
«Համագործակցություն հանուն զարգացման» կանանց հետազոտությունների և տեղեկատվության ազգային կենտրոն
Հասարակական քաղաքականության ինստիտուտ
Մասնակցային ժողովրդավարության միավորում (ADEPT)
Մարդու իրավունքների ռեսուրսային կենտրոն (CREDO)
Մոլդովայի ազգային երիտասարդական խորհուրդ (CNTM)
Մոլդովայի գյուղատնտեսության ոլորտի արտադրողների «AGROinform» ազգային ֆեդերացիա
Մոլդովայի մարդու իրավունքների ինստիտուտ (IDOM)
Մոլդովայի սոցիալական և տնտեսական հետազոտությունների հիմնադրամ (CASE)
Մոլդովայի փորձագետների խումբ

Տարածաշրջանային բնապահպանական կենտրոն (REC)
«Տեռա - 1530» ՀԿ
APEL էլեկտրոնային մամուլի ասոցիացիա
PROMO-LEX ասոցիացիա
«Vittorus» զարգացման եւ սոցիալական նախաձեռնությունների կենտրոն (IDIS)

ՎՐԱՍՏԱՆ

Ազատության ինստիտուտ
Արդար ընտրությունների եւ ժողովրդավարության միջազգային կենտրոն
Բազմազգ հասարակական շարժում
Բաց հասարակության ինստիտուտի վրաստանյան հիմնադրամ
Բնապահպանության հասարակական կազմակերպությունների կովկասյան ցանց
Եվրասիա համագործակցություն հիմնադրամ
Թբիլիսիի պետական համալսարանին կից եվրոպական ուսումնասիրությունների ինստիտուտ
Խաղաղության, ժողովրդավարության եւ զարգացման կովկասյան ինստիտուտ (CIPDD)
«Կանաչ ալիք ռադիո» եւ ասոցիացիա
Կովկասյան տարածաշրջանային կենտրոն
Համաշխարհային փորձը Վրաստանի համար
Հայերի Բյուրի անվան հիմնադրամի հարավկովկասյան տարածաշրջանային գրասենյակ
Մարդու իրավունքների կենտրոն
Վրաստանի առևտրային միությունների կոնֆեդերացիա
Վրաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա
Վրաստանի էներգետիկ ռեսուրսների արդյունավետ օգտագործման միություն Վրաստանի քաղաքացիական հասարակության ինստիտուտ
Վրաստանի ռազմավարական հետազոտությունների եւ զարգացման կենտրոն
Վրաստանի հետազոտական եւ ուսումնական ցանցերի միավորում
Վրաստանի ռազմավարական եւ միջազգային ուսումնասիրությունների հիմնադրամ (GFSIS)
«Elkana» կենսաբանական ֆերմերային ասոցիացիա
Homecare կոալիցիա

ՈՒԿՐԱԻՆԱ

Անդրկարպատյան քարոզչության եւ զարգացման կենտրոն
Արեւելյան Եվրոպայի հիմնադրամ (EEF)
Եվրաատլանտյան համագործակցության ինստիտուտ
Եվրոպական երկխոսություն
Էկոռեսուրս կենտրոն
Ինտեգրացիա եւ զարգացում
Ինտերնյուս Ուկրաինա հասարակական կազմակերպություն
Լեհ-ուկրաինական համերաշխություն
Կարիտաս Ուկրաինա
«Հասարակություն եւ բնապահպանություն» ռեսուրսների եւ վերլուծությունների կենտրոն
Մարդու իրավունքների հելսինկյան հիմնադրամ
ՆՈՄՈՍ կենտրոն
«Վերածնունդ» միջազգային հիմնադրամ
Տարածաշրջանային հետազոտությունների ինստիտուտ
Ուկրաինայի ստեղծագործական կենտրոն (CCC)
Ուկրաինայի քաղաքացիական վեհաժողով
Ուկրաինայի երիտասարդ դիվանագետների ակումբ
Ուկրաինայի գործատուների կոնֆեդերացիա
Ուկրաինայի եվրոպական երիտասարդություն
Ուկրաինայի եվրոպական ընտրություն
Ուկրաինայի առևտրային միությունների ֆեդերացիա
Ուկրաինայի մարդու իրավունքների հելսինկյան կենտրոն
Քաղաքական հետազոտությունների միջազգային կենտրոն

Օրենսդրական նախաձեռնությունների կենտրոն
Friedrich-Naumann-Stiftung für die Freiheit-Ուկրաինա
GURT ռեսուրսային կենտրոն
MAMA-86
OPORA քաղաքացիական ցանց
PAUCI լեհ-ուկրաինական համագործակցության հիմնադրամ
Souspilotist հիմնադրամ

ԵՄ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՑԱՆՑԵՐ ԿԱՄ ԵՐՐՈՐԴ ԵՐԿՐՆԵՐ

ԱՄՆ

Ազգային ժողովրդավարական ինստիտուտ
Ազգային նվիրատվություն հանուն ժողովրդավարության
Միացյալ Նահանգների Ատլանտյան խորհուրդ

ԱՎԱՏՐԻԱ

CARE Oesterreich Չարգացման համագործակցության եւ հումանիտար օգնության միություն
EESC փորձագետ, ENUF

ԲԵԼԳԻԱ

Առեւտրային միությունների միջազգային կոնֆեդերացիա. Համաեվրոպական
տարածաշրջանային խորհուրդ - ITUC
Բաց հասարակության ինստիտուտ
Եկեղեցիների համաշխարհային խորհրդին կից՝ Եվրոպայի զարգացման
կազմակերպությունների միավորում
ԵՄ - Ռուսաստան կենտրոն
ԵՄ - Ուկրաինա բիզնես խորհուրդ
Եվրոպական գործընկերություն հանուն ժողովրդավարության
Եվրոպական քաղաքականության կենտրոն
Եվրոպայի օրենքի հասարակության խորհուրդ (CCBE)
Կարիտաս Եվրոպա
Քաղաքական հիմնադրամների եվրոպական ցանց (EnoP)
Քաղաքական հիմնադրամների եվրոպական ցանց
CONCORD-EPAN
ILGA-EUROPE

ԲՈՒԼԴԱՐԻԱ

Շահ չհետապնդող օրենքի Բուլղարիայի կենտրոն

ԳԵՐՄԱՆԻԱ

Եվրոպական փոխանակում

ԴԱՆԻԱ

Մարդու իրավունքների եվրամիջերկրածովյան ցանց

ԹՈՒՐԶԻԱ

Ձեռնարկությունների կոնֆեդերացիայի Սեւծովյան եւ Կասպյան միություն (UBCCE)

ԻՍՊԱՆԻԱ

FRIDE Fundacion par las Relaciones Internacionales y el Dialogo Exterior

ԻՏԱԼԻԱ

Իտալիայի առևտրային միության միջազգային բաժին

ԼԵՅԱՍԱՆ

Արևելյան հետազոտությունների կենտրոն (OSW)
Արևելյան Եվրոպայի ժողովրդավարական կենտրոն
Լեհական մետրոպոլիաների միություն
Լեհաստանի առևտրի միություն «Solidarnosc»
Լեհաստանի Ռոբերտ Շումանի անվան հիմնադրամ
Կրթություն հանուն ժողովրդավարության հիմնադրամ
Հասարակայնության հետ հարաբերությունների ինստիտուտ հիմնադրամ
Միջազգային հարաբերությունների հիմնադրամ կենտրոն
Ռազմավարական հետազոտությունների ինստիտուտ
Ստեֆան Բատորիի անվան հիմնադրամ
Տեղական ժողովրդավարության օժանդակության հիմնադրամ
Տնտեսական հարցերով խորհրդատուների «Պրո-ակադեմիա» միավորում
Zagranica խումբ

ԼԻՏՎԱ

Ազատ առևտրի միություն
Արևելյան Եվրոպայի հետազոտությունների կենտրոն
Սորոսի անվան հիմնադրամ

ՀՈՒՆԱՍԱՆ

Եվրոպայի/Բալկանների ծայրամասային ծովամերձ շրջանների եւ Սեւծովյան տարածաշրջանային հանձնաժողովի կոնֆեդերացիա (CPMR-BBSRC)

ՀՈՒՆԳԱՐԻԱ

Ժողովրդավարական անցման միջազգային կենտրոն (ICDT)
Freedom House Եվրոպա

ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ

Եվրոպայի արտաքին հարաբերությունների խորհուրդ
ՉԼՄ-ների ցանցային ծրագիր, Բաց հասարակության հիմնադրամ
Էվկլիդեսի ցանց
Safeworld
Amnesty International

ՆԻԴԵՐԼԱՆԴՆԵՐ

Եվրոպայի մշակութային հիմնադրամ

ՇՎԵԴԻԱ

Անվտանգության եւ զարգացման քաղաքականության ինստիտուտ
Շվեդիայի հելսինկյան կոմիտե - Քաղաքացիական իրավունքների պաշտպաններ

ՇՎԵՅՑԱՐԻԱ

Բնության համաշխարհային հիմնադրամի Դանուբ-կարպատյան ծրագիր եւ եվրոպական քաղաքականության ծրագիր
Գործատուների միջազգային կազմակերպություն

ՉԵԽԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Բաց հասարակության քաղաքականության միավորում
Միջազգային հարցերի ասոցիացիա
People in need

ՊՈՐՏՈՒԳԱԼԻԱ

Agencia Innova

ՍԼՈՎԱԿԻԱ

Պոնտիս հիմնադրամ
Սլովակիայի արտաքին քաղաքականության ասոցիացիա
Տնտեսական հետազոտությունների ինստիտուտ

ՖՐԱՆՍԻԱ

Ազգային ժողովրդավարական կազմակերպությունների ասոցիացիա
Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիա (FIDH)
Քրիստոնեական արտադրությունների ֆրանսիական կոնֆեդերացիա
Ֆրանսիայի տնտեսական եւ սոցիալական խորհուրդ

**Արեւելյան գործընկերության
Քաղաքացիական հասարակության համաժողովի
Ղեկավար կոմիտեի՝ 2009թ. նոյեմբերի 16-17-ը Բրյուսելում
կայացած հանդիպմանն ընտրված անդամները**

ԱԼԳ ԶՅՅ թեմատիկ աշխատանքային խմբերի համակարգողներ

Խումբ 1. Ժողովրդավարություն, մարդու իրավունքներ, արդյունավետ կառավարում եւ կայունություն

1. Սերգեյ Մացկեւիչ, Բելառուսի ժողովրդավարամետ հասարակական կազմակերպությունների միություն (Համաժողովի խոսնակ)
2. Զրիստինա Պրուներովա, Եվրոպական գործընկերություն հանուն ժողովրդավարության կազմակերպություն

Խումբ 2. Տնտեսական ինտեգրացում եւ համապատասխանություն ԵՄ քաղաքականությանը

1. Կախաբեր Գոգուաշվիլի, Վրաստանի ռազմավարական եւ միջազգային հետազոտությունների հիմնադրամ
2. Իվան Վոլեշ, Եվրոպայի տնտեսական եւ սոցիալական կոմիտե

Խումբ 3. Բնապահպանություն, կլիմայական փոփոխություններ եւ Էներգետիկ անվտանգություն

1. Միխայլո Գոնչար, NOMOS կենտրոն
2. Իռեն Լուսիուս, ԲՅՀ Դանուբ-կարպատյան ծրագիր եւ Եվրոպական քաղաքականության ծրագիր

Խումբ 4. Միջանձնային շփումներ

1. Նատալյա Կոչոնարի, Մոլդովայի երիտասարդական ազգային խորհուրդ
2. Բեն Ռաթթենբերի, «Էվկլիդեսի ցանց»

ԱԼԳ ազգային «աջակիցներ»

1. Բորիս Նավասարդյան, Երեանի մամուլի ակումբ, Հայաստան
2. Ավագ Հասանով, Հումանիտար հետազոտությունների կենտրոն, Ադրբեջան
3. Ուլադ Վիալիչկա, ԵՎՐԱԲԵԼԱՌՈՒՄ միջազգային միավորում, Բելառուս
4. Թամար Խիդաշեւի, Վրաստանի երիտասարդ իրավաբանների միություն, Վրաստան
5. Սորին Մերեակրե, Եվրասիա հիմնադրամ, Մոլդովա
6. Սվյատոսլավ Պավլիուկ, PAUCI լեհ-ուկրաինական համագործակցության հիմնադրամ

ԵՄ ներկայացուցիչներ (ներառյալ միջազգային ցանցերը)

1. Իրիս Կեմպե, Յայնրիխ Բյուլի անվան հիմնադրամի հարավկովկասյան տարածաշրջանային գրասենյակ
2. Անտոնելլա Վալմորբիդա, Տեղական ժողովրդավարական գրասենյակների միավորում
3. Կատարզինա Պելչժինսկա - Նալեչ, Արեւելյան հետազոտությունների կենտրոն

**ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾՆՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ
Բրյուսել, 16-17 նոյեմբերի, 2009թ.
Պրն Ս. Մացկեվիչի՝ Արտաքին գործերի
Նախարարներին ուղղված ելույթը**

Նախարարներ, տիկնայք եւ պարոնայք, պատիվ ունեմ ներկայացնելու ձեզ Քաղաքացիական հասարակության համաժողովի մասնակիցների առաջարկությունները:

Պրահայի գազաթափողովի ընթացքում ընդունված համատեղ հայտարարության հիմնական գաղափարներից մեկն այն էր, թե ինչպես կարելի է քաղաքացիական հասարակության հնարավորություններն օգտագործել Արեւելյան գործընկերության նպատակներին հասնելու համար: Բրյուսելում, 2009թ. նոյեմբերի 16-17-ին կայացած Քաղաքացիական հասարակության համաժողովի ԵՄ եւ ԱԳ երկրների ավելի քան 200 մասնակիցներ հավաքվեցին այս հարցերը քննարկելու համար եւ համատեղ ուժերով մշակեցին մի շարք առաջարկություններ: Դրանք կազմվել են աշխատանքային խմբերի կողմից՝ Արեւելյան գործընկերության 4 թեմատիկ պլատֆորմների հիման վրա, այնուհետեւ հաստատվել Համաժողովի կողմից:

Ես կմատնանշեմ միայն մի քանի կետեր, իսկ ամբողջական փաստաթուղթը կներկայացվի Նախարարներին: Քաղաքացիական հասարակության համաժողովի մասնակիցները կարծում են, որ քաղաքացիական հասարակության կազմակերպությունները պետք է համարվեն ԵՄ գերատեսչությունների, անդամ պետությունների եւ Արեւելյան գործընկերության (ԱԳ) 6 երկրների ղեկավարությունների հիմնական ինստիտուցիոնալ գործընկերներ՝ երկկողմ եւ բազմակողմ մակարդակով ԱԳ ծրագրերի նախագծման, իրականացման, մոնիտորինգի եւ գնահատման հարցերում: ԱԳ երկրներն իրենց հերթին պետք է ձգտեն կյանքի կոչել կոպենհագենյան չափանիշները եւ Եվրոպայի խորհրդի ու Միավորված ազգերի կազմակերպության հանդեպ ստանձնած պարտավորությունները եւ նրանց առաջարկությունները: Այս առիթով կցանկանայի շեշտել, որ Համաժողովը խստորեն դատապարտում է ԱԳ որոշ երկրներում քաղաքական բանտարկյալների առկայությունը եւ պահանջում նրանց անհապաղ ազատ արձակումը:

ԱԳ-ն գործընկեր երկրներին հնարավորություն է ընձեռում ինտեգրվել Եվրամիությանը՝ կայուն ժողովրդավարական կառույցների զարգացման եւ քաղաքացիական հասարակության ավելի մեծ մասնակցության խթանման միջոցով, մասնավորապես՝ մարդու իրավունքների, ընտրական չափանիշների համապատասխանության, մամուլի ազատության, կոռուպցիայի դեմ պայքարի, տեղական իշխանությունների վերապատրաստման եւ ցանցային համագործակցության ոլորտներում: Այժմ թույլ տվեք ներկայացնել Քաղաքացիական հասարակության համաժողովի կողմից մշակված որոշ առաջարկություններ:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ 1. ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ, ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ, ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

Խումբը որոշում է կայացրել իր աշխատանքային ծրագրերում ավելացնել «մարդու իրավունքներ» հատվածը եւ առաջարկում է այս համատեքստում փոփոխության ենթարկել նաեւ Արեւելյան գործընկերության թիվ 1 թեմատիկ պլատֆորմի վերնագիրը:

1. ԵՄ-ը պետք է խրախուսի ԱԼԳ երկրների իշխանություններին՝ ազգային եւ միջազգային մակարդակներում ներմուծել եւ ամրապնդել ժողովրդավարության սկզբունքները. կառավարման բարձր չափանիշներ, օրենքի գերակայություն, օրենքների կատարման, ինչպես նաեւ դատախազության եւ ոստիկանության գործունեության նկատմամբ քաղաքացիական արդյունավետ վերահսկողության սահմանում: ԱԼԳ երկրները պետք է ապահովեն դատարանների անկախությունը եւ արդարադատության մատչելիությունը, ինչպես նաեւ կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետ մեխանիզմները:

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

2. ԵՄ-ը պետք է ապացուցի իր արտաքին քաղաքականության մեջ եւ երրորդ երկրների հետ համաձայնագրերում մարդու իրավունքների միջազգային չափանիշների խնդրի առանցքայնությունը՝ զգալի տեղ հատկացնելով դրանց: ԱԼԳ գործընթացում նշանակալի դեր պետք է ունենա մարդու իրավունքների նշյալ չափանիշների կենսագործումը:

3. ԱԼԳ երկրներում մարդու իրավունքների պաշտպանության հետ կապված իրավիճակի գնահատումը պետք է ծառայի որպես նրանց ժողովրդավարական առաջընթացի համընդհանուր գնահատման հիմնական չափանիշ: Այս կապակցությամբ ցավով պետք է հայտնեմ, որ Քաղաքացիական հասարակության համաժողովի Բելառուսի մասնակիցներից մեկը՝ երիտասարդական ՅԿ-ի ներկայացուցիչ Տատյանա Սապուլկան, հեռացվել է Բելառուսի պետական համալսարանից՝ Բրյուսելի հանդիպմանը մասնակցելու պատճառով: Ավելին, դեկտեմբերին Բելառուսում արձանագրվել են երիտասարդ ակտիվիստների առեւանգման դեպքեր: Նման գործողությունները, որոնցով ոտնահարվում են մարդու իրավունքների ոլորտի մի շարք համաձայնագրերի եւ Պրահայի հռչակագրի դրույթները, կասկածի տակ են դնում Արեւելյան գործընկերությանն այդ երկրի մասնակցության անկեղծությունը:

Հուսով եմ, որ Բելառուսի եւ ԵՄ անդամ պետությունների կառավարությունները կանեն հնարավորը, որպեսզի նման անընդունելի գործողությունների պատասխանատուները հատուցեն իրենց արարքների համար, կանխվեն երիտասարդների հանդեպ բռնությունները, եւ Տատյանա Սապուլկան վերականգնվի համալսարանում:

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԸՆՏՐԱՐՇԱՎՆԵՐ

4. ԵՄ-ը պետք է օժանդակի ԱԼԳ երկրներին՝ արդար, ազատ եւ թափանցիկ ընտրությունների ապահովման հարցում:

5. ԱԼԳ երկրների կառավարությունները եւ խորհրդարանները պարտավորվում են ընտրությունների համար համապատասխան մթնոլորտ ապահովել, որը թեկնածուների եւ կուսակցությունների համար կերաշխավորի պետական ՉԼՄ-ների

հասանելիություն եւ քաղաքացիական իրավունքներից օգտվելու հավասար պայմաններ:

ՉԼՄ-ՆԵՐ

6. ԱԼԳ նպատակն է՝ նպաստել ՉԼՄ-ների անկախությանը, բազմակարծությանը եւ բազմազանությանը եւ ապահովել լրագրողների իրավունքները՝ երաշխավորելով նրանց անվտանգությունն իրենց մասնագիտական պարտականություններն իրականացնելիս:

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՅԱՍՏԱՏՈՒՄ

7. Կայունությունը եւ ժողովրդավարական բարեփոխումները պետք է խարսխված լինեն հանդուրժողականության եւ անվտանգության սկզբունքների վրա: Յակամարտությունների կանխմանը, մեղմացմանը եւ լուծմանն ուղղված պրագմատիկ մոտեցումը չպետք է հակասության մեջ մտնի ԵՄ արժեքների հետ, քանի որ մեր սկզբունքը պետք է լինի՝ «Ժողովրդավարությունն անվտանգության հաստատման լավագույն քաղաքականությունն է»:

* * *

Եվրոպայի Խորհրդի համաձայնագրերի մանրակրկիտ ուսումնասիրությանը զուգահեռ՝ Զաղաքացիական հասարակության համաժողովը պետք է յուրաքանչյուր երկրի համար հատուկ զեկույցներ պատրաստի ժողովրդավարական կառավարման ոլորտում ՅԿ առաջընթացների վերաբերյալ, դրանցում ներկայացնելով ժողովրդավարական կառավարման վերաբերյալ միջազգային չափանիշների եւ համաձայնագրերի համապատասխանության անկախ գնահատականներ:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ 2. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՈՒՄ ԵՎ ՅԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՄ ԶԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ

1. Զաղաքացիական հասարակության համաժողովն օժանդակում է այն հիմնական նպատակներին, որոնք ամրագրվել են տնտեսության ինտեգրման եւ ԵՄ օրենսդրությանը համապատասխանեցման վերաբերյալ թեմատիկ պլատֆորմներում: Աշխատանքային ծրագրով քաղաքացիական հասարակության կազմակերպություններին կոչ է արվում ներգրավվել թեմատիկ պլատֆորմի եւ Խորը եւ համապարփակ ազատ առևտրային տարածքի (ԽՅԱԱՏ) հետ կապված առևտրային ու դրան հարակից կարգավորիչ համագործակցության աշխատանքներում:

2. ԶՅՅ-ը ԵՄ եւ ԱԼԳ երկրների ուշադրությունը հրավիրում է Արեւելյան գործընկերության օրակարգում տնտեսական եւ սոցիալական հետեւյալ հարցերն ընդգրկելու անհրաժեշտության վրա.

- ա) սոցիալական ապահովության եւ սոցիալական պաշտպանության համակարգերի գործունեության եւ աղքատության դեմ պայքարի խթանում.
- բ) կայուն զարգացման եւ կլիմայական փոփոխություններին համարժեք արձագանքելու սկզբունքների ներմուծում.
- գ) աշխատանքային ազատ տեղաշարժի պայմանների ապահովում.
- դ) աջակցություն այն գործընկեր երկրների ջանքերին, որոնք դեռեւս Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՅԿ) անդամ չեն, բայց պատրաստվում են դառնալ այդպիսին.

3. Աջակցությունը սպառողների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպություններին՝ որպես շուկայական տնտեսության կարելու բաղադրիչների, պետք է դառնա գործողությունների նոր ազգային ծրագրերի մի մասը:

4. Պետք է մշակվի նոր նախաձեռնություն, որը նպատակ կհետապնդի օժանդակել գործարար կապերին, միջազգայնացմանը եւ շուկաների մատչելիությանը, այդ թվում՝ առևտրի եւ արդյունաբերության պալատների ու գործարար միավորումների վերաբերյալ know how-ի (արտադրության գաղտնիքների) փոխանցմանը ԵՄ անդամ երկրներից՝ ԱԳ երկրների իրենց գործընկերներին:

5. Հանրային գործընկերներին եւ հանրային երկխոսությանը ցուցաբերվող օժանդակությունը պետք է դառնա ԵՄ եւ ԱԳ անդամ երկրների միջեւ իրավական համապատասխանեցման մի մասնիկը՝ ներառյալ աշխատանքային հիմնական չափանիշների իրականացումը:

**ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ 3. ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ,
ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ԷՆԵՐԳԵՏԻԿ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ**

ԷՆԵՐԳԵՏԻԿ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ԱԳ տարածաշրջանի համար մշակել համապարփակ կայուն էներգետիկ քաղաքականություն, որը հաշվի կառնի ազգային շահերը եւ նպատակ կհետապնդի բարելավել շրջակա միջավայրի պաշտպանությունը (ներառյալ կենսաբանական բազմազանությունը), էներգետիկ արդյունավետությունը, ինչպես նաեւ կլիմայական փոփոխություններին արձագանքելու եւ ներմուծվող էներգիայից կախվածությունը մեղմելու հնարավորությունները:

2. ԵՄ անդամ պետությունները եւ ԱԳ երկրները պետք է համատեղ աշխատանք ծավալեն էներգիայի առավել անվտանգ տեղափոխման ապահովման ուղղությամբ: Պետք է խթանել Գազի թափանցիկության եվրոպական նախաձեռնությունը՝ որպես ԱԳ փորձական նախագիծ, որը բաց կլինի երրորդ երկրների համար՝ որպես ճգնաժամի կանխման մեխանիզմ:

**ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ, ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆ
ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ**

3. Աջակցություն բնապահպանական խնդիրների ընդգրկմանը ԱԳ երկրների ազգային բոլոր ծրագրերում (օրինակ՝ արդյունաբերություն, տրանսպորտ, տարածաշրջանային զարգացում, բյուջե, գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ԵՄ ջրային օրենք), մասնավորապես՝ Բնապահպանության ռազմավարական գնահատման սկզբունքի խթանման միջոցով:

**ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՉԱՐԳԱՑՈՒՄ ԵՎ ԻՐԱԶԵԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ**

4. Կայուն զարգացմանն ուղղված կրթության սկզբունքների իրագործում ազգային կրթական համակարգերում: ԵՄ երկրներից ԱԳ երկրներին գիտելիքների փոխանցման գործընթացի խթանում:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ 4. ՄԻՋԱՆՁՆԱՅԻՆ ՇՓՈՒՄՆԵՐ

1. ԵՄ-ի հետ կապված հարցերի եւ ԵՄ-ի ընձեռած հնարավորությունների վերաբերյալ տեղեկատվության տարածում՝ տեղեկատվական հասարակության խթանման եւ Եվրոպական տեղեկատվական ցանցի ընդլայնման միջոցով:

2. Արձագանքել ԱլԳ յուրաքանչյուր երկրում ծագող յուրահատուկ իրավիճակներին եւ քաղաքացիական հասարակության զարգացման ընթացքին, մասնավորապես՝ օգտագործելով առաջնորդների համար գործող ցանցերը (ինչպես օրինակ՝ Եվկլիդեսի ցանցը եւ Քաղաքացիական հասարակության առաջնորդների ցանցը)՝ ընդհանուր փոխըմբռնումը եւ համատեղ արժեքները՝ ԱլԳ երկրների հասարակական կազմակերպությունների ու ԵՄ անդամ պետությունների միջեւ համագործակցությունն ամրապնդելու նպատակով:

ՎԻՉԱՆԵՐԻ ՍՏԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ՊԱՐԶԵՑՈՒՄ ԵՎ ԱԶԱՏԱԿԱՆԱՑՈՒՄ

3. ԵՄ-ն եւ նրա անդամ պետությունները պետք է ԱլԳ բոլոր վեց երկրներին առաջարկեն «ճանապարհային քարտեզներ»՝ վիզաներից ազատ ռեժիմների անցնելու համար, եւ հնարավորինս արագ վերանայեն մուտքի արտոնագրերի համար սահմանված վճարները: Որպես առաջին քայլ՝ պարզեցնել վիզաների ստացման գործընթացները եւ ընձեռել բազմակի մուտքի երկարատեւ արտոնագրեր ստանալու հնարավորություն:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

4. Խթանել ոչ ֆորմալ կրթությունը եւ նշանակալիորեն ավելացնել կամավորական եւ ստաժավորման, դպրոցական փոխանակման ծրագրերի եւ հեռավորության վրա ուսուցման հնարավորությունների ֆինանսավորումը:

ԵՐԻՏԱՍԱՐԴՂՈՒԹՅՈՒՆ

5. Բոլոր մակարդակներում խթանել երիտասարդների ակտիվ մասնակցությունը որոշումների ընդունման գործընթացին եւ մշակել մեխանիզմներ ԱլԳ նպատակների իրականացմանն ուղղված գործունեության մեջ նրանց ներգրավման համար: Երիտասարդներին ուղղված՝ խաղաղության եւ միջմշակութային կապերի վերաբերյալ հատուկ ուսումնական ծրագրերի մշակում հետբախումնային տարածքների համար:

ՄՇԱԿՈՒՅԹ

6. Խթանել ԵՄ ու ԱլԳ երկրների միջեւ մշակութային փոխանակումները եւ խրախուսել ՅՈՒՆԵՍԿՕ-ի Մշակութային արտահայտման բազմազանության պաշտպանության եւ խրախուսման մասին համաձայնագրի վավերացումը/իրականացումը ԱլԳ բոլոր վեց երկրներում:

* * *

Քաղաքացիական հասարակության համաժողովի մասնակիցները հաստատում են, որ քաղաքացիական հասարակության դերը չպետք է սահմանափակվի միայն առաջարկությունների մշակմամբ: Մասնակիցների մեծամասնությունը Քաղաքացիական հասարակության համաժողովը համարում է ոչ թե պարզապես

հանդիպում, այլ ազգային կառավարությունների եւ Եվրոպական Միության միջեւ ընթացող երկխոսության հավասարազոր եւ ակտիվ գործընկեր:

Այս նպատակին հասնելու համար 2009թ. Քաղաքացիական հասարակության համաժողովը ընտրել է Ղեկավար կոմիտե, որի կազմում ընդգրկված են 8 թեմատիկ պլատֆորմների համակարգողները եւ ներկայացուցչությունների 9 համակարգող-ղեկավարները: Ղեկավար կոմիտեի առաջին նիստը տեղի կունենա 2010թ. հունվար ամսին, Բոյունսելում: Դրա հիմնական առաքելությունն Արեւելյան գործընկերության երկկողմ եւ բազմակողմ շրջանակներում Քաղաքացիական հասարակության մասնակցության համար համապատասխան ռազմավարության մշակումն ու իրականացումն է:

Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները թե՛ ԵՄ հաստատությունների, թե՛ ազգային կառավարությունների կողմից ակնկալում են աջակցություն իրենց մասնակցությանը, ինչը կօգնի երկխոսության մեջ ընդգրկել հետաքրքրությունների ավելի լայն շրջանակ եւ կնպաստի Արեւելյան գործընկերության գաղափարների ավելի լայն ըմբռնմանն ու աջակցությանը ԵՄ եւ ԱԼԳ երկրների քաղաքացիների կողմից:

Նախարարներ, տիկնայք եւ պարոնայք, շնորհակալություն Քաղաքացիական հասարակության համաժողովի հանձնարարականների հանդեպ ձեր ուշադրության համար: Պատրաստ եմ պատասխանել ձեր հարցերին:

**ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ
(Բոյուսել, 16-17 նոյեմբերի, 2009)
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ 1. ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ,
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ, ԱՐԴՅՈՒՆԱԿԵՏ
ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ**

2009թ. նոյեմբերի 16-ին Բոյուսելում կայացած հանդիպմանը Քաղաքացիական հասարակության համաժողովի ժողովրդավարության, մարդու իրավունքների, արդյունավետ կառավարման եւ կայունության խմբի մասնակիցները որոշեցին, որ քաղաքացիական հասարակության կազմակերպությունները (ՔՀԿ) պետք է հանդիսանան ԵՄ գերատեսչությունների, անդամ պետությունների եւ Արեւելյան գործընկերության (ԱԳ) 6 երկրների ղեկավարությունների հիմնական ինստիտուցիոնալ գործընկերներ՝ երկկողմ եւ բազմակողմ մակարդակով ԱԳ ծրագրերի նախագծման, իրականացման, մոնիտորինգի եւ գնահատման հարցերում: Խումբը որոշում է ընդունել իր աշխատանքային ծրագրերում ավելացնել «մարդու իրավունքներ» հատվածը եւ առաջարկում է այս համատեքստում փոփոխության ենթարկել նաեւ Արեւելյան գործընկերության թիվ 1 թեմատիկ պլատֆորմի վերնագիրը:

ՔՀԿ-ները պետք է ընդգրկվեն նաեւ ԱԳ երկրներում ԵՄ ներգրավվածության գնահատման գործընթացում, մասնավորապես, այսպես կոչված «սառեցված հակամարտությունների» առնչությամբ, ինչպես նաեւ ԵՄ քաղաքականությունների եւ գործիքների (ինչպիսիք են, օրինակ, Եվրոպական հարեւանության քաղաքականության գործիքը, Համագործակցության զարգացման գործիքի թեմատիկ ծրագրերը եւ Ժողովրդավարության եւ մարդու իրավունքների Եվրոպական գործիքը) իրականացման եւ յուրացման հարցում:

ԱԳ երկրները պետք է ձգտեն կյանքի կոչել կոպենհագենյան չափանիշները եւ Եվրոպայի խորհրդի ու Միավորված ազգերի կազմակերպության հանդեպ ստանձնած պարտավորությունները եւ նրանց առաջարկությունները: ՔՀԿ-ները պետք է մասնակցեն նաեւ այս նպատակների իրականացման գործում ԱԳ երկրների առաջընթացի մոնիտորինգի գործունեությանը:

ԱԳ-ն գործընկեր երկրներին հնարավորություն է ընձեռում ինտեգրվել Եվրամիությանը՝ կայուն ժողովրդավարական կառույցների զարգացման եւ քաղաքացիական հասարակության ավելի լայն մասնակցության խթանման միջոցով, մասնավորապես՝ մարդու իրավունքների, ընտրական չափանիշների համապատասխանության, մամուլի ազատության, կոռուպցիայի դեմ պայքարի, տեղական իշխանությունների վերապատրաստման եւ ցանցային փոխկապակցման ոլորտներում: Բացի այդ, ԱԳ շրջանակներում առկա բոլոր գործընթացներում հատուկ ուշադրություն պետք է դարձվի գենդերային հարցերին:

Համաժողովը խստորեն դատապարտում է ԱԳ որոշ երկրներում քաղաքական բանտարկյալների առկայությունը եւ պահանջում է նրանց անհապաղ ազատ արձակումը:

ԸՆԴՀԱՆՈՒՐ - ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐ

1. ԵՄ-ը պետք է խրախուսի ԱԼԳ տարածաշրջանային երկրների իշխանություններին՝ ներմուծել կամ ամրապնդել.

ա) ժողովրդավարության սկզբունքներն ազգային եւ միջազգային մակարդակներում.

- բարեփոխումներ ԱԼԳ երկրների հանրային քաղաքականության ինստիտուտներում՝ քաղաքական համակարգերը քաղաքական նախաձեռնությունների համար ավելի բաց դարձնելու եւ քաղաքական գործընթացներին քաղաքացիական հասարակության մասնակցությունն ապահովելու համար.
- համապարփակ ժողովրդավարական գործընթացների ապահովում.
- ինքնակառավարման ամրապնդում՝ տեղական կառավարման կայուն եւ անկախ համակարգերի միջոցով՝ հատուկ կարելորելով տեղական իշխանությունների համապատասխան ֆինանսավորման խնդիրը.
- ԱԼԳ երկրներում ժողովրդավարության վիճակի մոնիտորինգի իրականացում՝ այդ գործընթացներում ԶՀԿ-ներին շնորհելով առանձնահատուկ դերակատարում.

բ) կառավարման բարձր չափանիշներ, օրենքի գերակայություն, օրենքների կատարման, ինչպես նաեւ դատախազության եւ ոստիկանության գործունեության նկատմամբ քաղաքացիական արդյունավետ վերահսկողության սահմանում, խոշտանգումների եւ անմարդկային վերաբերմունքի բացառում.

գ) դատարանների անկախություն եւ արդարադատության մատչելիության ապահովում.

դ) կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետ մեխանիզմներ:

2. ԱԼԳ երկրները պետք է.

ա) բարեփոխումներ իրականացնեն կրթության համակարգում, մասնավորապես՝ օրենքի գերակայության, ժողովրդավարության, մարդու իրավունքների եւ հանրային կառավարման ոլորտներում.

բ) անեն հնարավորը՝ տվյալ ոլորտին առնչվող ազգային օրենսդրությունը ԵՄ չափանիշներին համապատասխանեցնելու համար, ներառյալ խտրականությունն արգելող համընդգրկուն օրենքների ընդունումը.

գ) ընդունեն օրենքներ, որոնք կերաշխավորեն արտահայտվելու ազատությունը, ինչպես նաեւ հասարակական կյանքում, ներառյալ ՉԼՄ-ներում կբացառեն կրոնի եւ ազգային փոքրամասնությունների, քսենոֆոբիայի (օտարատյացության) եւ ռասայական խտրականության, սեռական կողմնորոշման եւ գենդերային ինքնության հարցերում ատելություն պարունակող խոսքը:

3. ԱԼԳ-ը պետք է ավելի արդյունավետ դարձնի Կարգավորման ազդեցության գնահատման ընթացակարգերի կիրառումը ԱԼԳ երկրների օրենսդրությունների մշակման գործընթացում:

4. ԶՅԿ-ները պետք ԱԼԳ իրականացման գործընթացի շահառուները լինեն: Մասնավորապես, նրանք պետք է օժտված լինեն ԱԼԳ շրջանակներում նախագծեր եւ նախաձեռնությունների առաջարկներ ներկայացնելու հնարավորությամբ:

5. ԶՅԿ-ները պետք է ներգրավվեն ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող նախագծերի իրականացումը գնահատելու գործում, եւ հետագայում ձեռք բերվելիք համաձայնությունների թափանցիկությունը երաշխավորելու համար այդ նախագծերը պետք է մշակվեն ԶՅԿ-ների մասնակցությամբ:

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

1. ԵՄ-ն իր արտաքին քաղաքականության մեջ եւ երրորդ երկրների հետ համաձայնագրերում պետք է ապացուցի մարդու իրավունքների միջազգային չափանիշների խնդրի առանցքայնությունը՝ զգալի տեղ հատկացնելով դրանց: ԱԼԳ գործընթացում նշանակալի դեր պետք է ունենա մարդու իրավունքների՝ նշյալ չափանիշների կենսագործումը:

2. ԵՄ-ը պետք է օժանդակի եւ ամրապնդի մարդու իրավունքների պահպանման ազգային մեխանիզմների անկախությունը եւ արդյունավետությունը (ինչպիսին է, օրինակ, Օմբուդսմենի ինստիտուտը):

3. ԵՄ-ը պետք է խտրականությունն ու ատելության քարոզչությունն արգելող օրենքների, ինչպես նաեւ ազգային օրենսդրությունը ԵՄ չափանիշներին համապատասխանեցնելու ոլորտում փոխանցի իր լավագույն փորձը:

4. ԱԼԳ ծրագրերի միջոցով ԵՄ-ը պետք է ուշադրություն դարձնի մարդու իրավունքների ամբողջ ոլորտին, որի մեջ մտնում են քաղաքացիական եւ քաղաքական, տնտեսական, սոցիալական ու մշակութային իրավունքներ: Այն ներառում է հանրային եւ սոցիալական ծառայությունների մատչելիությունը, առեւտրային միությունների հանդեպ համընդհանուր հարգանքը եւ Աշխատանքի համաշխարհային կազմակերպության (ILO) համաձայնագրով ու Եվրոպական սոցիալական խարտիայով ամրագրված՝ աշխատողների իրավունքները, ինչպես նաեւ մասնավոր սեփականության իրավունքը:

5. ԱԼԳ երկրներում մարդու իրավունքների պաշտպանության հետ կապված իրավիճակի գնահատումը պետք է ծառայի որպես նրանց ժողովրդավարական առաջընթացի համընդհանուր գնահատման հիմնական չափանիշ: ԵՄ-ը պետք է օժանդակի ԱԼԳ երկրներում մարդու իրավունքներով զբաղվող կազմակերպություններին՝ մարդու իրավունքների մշտական մոնիտորինգի համար արդյունավետ մոդելների եւ նորարարական մեթոդների մշակման ու իրականացման գործում: Պետք է ստեղծվեն արդյունավետ հաղորդակցման միջոցներ եւ ինստիտուցիոնալ պլատֆորմներ՝ ԵՄ հաստատություններին, Եվրոպայի խորհրդին, ԵԱԶԿ-ին, ինչպես նաեւ ԵՄ առանձին անդամ պետություններին մոնիտորինգի արդյունքների մասին տեղեկացնելու նպատակով:

6. ԱԼԳ երկրները պետք է բարելավեն միջազգային նորմերի, մեխանիզմների ու առաջարկությունների իրականացումն ազգային մակարդակում: ԵՄ-ը պետք է օժանդակի ԵՄ մարդու իրավունքների եւ մասնավորապես՝ մարդու իրավունքների պաշտպանների վերաբերյալ ուղեւիշների, ինչպես նաեւ Միավորված ազգերի կազմակերպության, Եվրոպայի խորհրդի, Եվրոպայի անվտանգության եւ համագործակցության կազմակերպության եւ Մարդու իրավունքների եվրոպական

դատարանի համապատասխան հանձնարարականների եւ որոշումների լիակատար իրականացմանը:

7. ԱլԳ-ը պետք է խիստ կարելորի մարդու իրավունքներն իր բոլոր ծրագրերում, ներառյալ՝ ապաստանի տրամադրման եւ ներգաղթի քաղաքականությունը, տնտեսական զարգացումը, միջսահմանային համագործակցությունը, առեւտրային եւ էներգետիկ քաղաքականությունը:

8. ԱլԳ-ը պետք է խթանի ԶԿ-ների ներգրավումը կառավարության խոցելի խմբերի, մասնավորապես՝ էթնիկ փոքրամասնությունների եւ ներքին տեղահանված անձանց շահերի պաշտպանությանն ուղղված քաղաքականության մշակման եւ իրականացման հարցում: ԱլԳ-ը պետք է խթանի միջմշակութային երկխոսությունը ԱլԳ երկրների, ինչպես նաեւ ԵՄ անդամ պետությունների միջեւ՝ խրախուսելով հանդուրժողականությունը եւ բազմազանությունը:

9. Հատուկ ուշադրության պետք է արժանանա փոքրամասնությունների իրավունքների խնդիրը, մասնավորապես՝ ԱլԳ երկրներում որոշումների ընդունման եւ հասարակական կյանքին հավասար մասնակցության նրանց իրավունքը, ինչպես նաեւ այս գործընթացն ապահովելուն ուղղված իրավական եւ գերատեսչական երաշխիքների ստեղծման հարցը:

10. ԱլԳ-ը պետք է իրականացնի հանդուրժողականության, բազմակարծության եւ բազմազանության սկզբունքների վրա հիմնված ծրագրեր՝ կապված պատմության եւ ազգային մշակույթների ու կրոնի, ԼԶՏ (լեսբուհիներ, համասեռամուլներ, բիսեքսուալներ եւ տրանսսեքսուալներ) եւ այլ մարզինալ խմբերի հետ:

11. ԱլԳ-ը համագործակցության ծրագրերի միջոցով պետք է օժանդակի հանդուրժողականության, էկոմեթնիկ կրոնների, բազմամշակութային եւ բազմաէթնիկ համագործակցության արժեքների վրա հիմնված բազմակարծության եւ ժողովրդավարության քաղաքական մշակույթի ոլորտում կրթությանը՝ թե՛ տվյալ երկրի սահմանների ներսում, եւ թե՛ միջսահմանային համագործակցության հարաբերություններում:

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԸՆՏՐԱՐՇԱԿՆԵՐ

1. ԵՄ-ը պետք է օժանդակի ԱլԳ երկրներին՝ արդար, ազատ եւ թափանցիկ ընտրությունների ապահովման հարցում, այդ թվում՝ աջակցություն ցուցաբերի ընտրությունների համար պատասխանատու պաշտոնյաների համապատասխան կրթությանը եւ ԶԿ-ների կողմից իրականացվող անկախ դիտորդական առաքելությանը:

2. ԱլԳ երկրների կառավարությունները եւ խորհրդարանները պարտավորվում են՝

- ա) ընտրությունների համար ապահովել համապատասխան մթնոլորտ, որը կերաշխավորի թեկնածուների եւ կուսակցությունների համար պետական ՉԼՄ-ների հասանելիություն եւ քաղաքացիական իրավունքներից օգտվելու հավասար պայմաններ.
- բ) բարելավել ազգային ընտրական օրենսդրությունը՝ Եվրոպայի խորհրդի եւ ԵԱՀԿ-ի առջեւ ստանձնած պարտավորություններին համապատասխան.
- գ) թույլատրել ընտրությունների անկախ մոնիտորինգի իրականացում՝ այդ թվում նաեւ տեղական ԶԿ-ների կողմից:

ՉԼՄ- ՆԵՐ

ԱԼԳ նպատակն է՝

1. նպաստել ՉԼՄ-ների անկախությանը, բազմակարծությանը եւ բազմազանությանը.

2. ապահովել լրագրողների իրավունքները եւ երաշխավորել նրանց անվտանգությունն իրենց մասնագիտական պարտականություններն իրականացնելիս.

3. օժանդակել ՉԼՄ-ների վերաբերյալ Եւ սահմանած չափանիշների եւ առաջարկությունների կատարմանը, մասնավորապես՝ կարգավորման անկախության, հանրային հեռուստառադիոհեռարձակման եւ սեփականության թափանցիկության ապահովման խնդրում.

4. երաշխավորել, որ թվայնացմանն անցումը չսահմանափակի տեղեկատվության հանրային հասանելիությունը, եւ ապահովել ՉԼՄ-ների բովանդակության բազմազանությունը.

5. մշակել մասնագիտական եւ քաղաքացիական, ներառյալ՝ նոր ՉԼՄ-ների (ինտերնետ) զարգացման ԵՄ նախագիծ.

6. հակազդել այն բոլոր ջանքերին, որոնք ուղղված կլինեն ինտերնետի հասանելիության սահմանափակմանը կամ ինտերնետային գրաքննության սահմանմանը:

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄ

1. Կայունությունը եւ ժողովրդավարական բարեփոխումները պետք է խարսխված լինեն հանդուրժողականության եւ անվտանգության սկզբունքների վրա: Հակամարտությունների կանխմանը, մեղմացմանը եւ լուծմանն ուղղված պրագմատիկ մոտեցումը չպետք է հակասության մեջ մտնի ԵՄ արժեքների հետ, քանի որ մեր սկզբունքը հետեւյալն է. «Ժողովրդավարությունն անվտանգության հաստատման լավագույն քաղաքականությունն է»: Նման ռազմավարությունը պետք է հիմնվի ո՛չ թե տարածաշրջանի յուրաքանչյուր երկրի ազգային շահերի, այլ՝ փոխադարձ նպատակների եւ հետաքրքրությունների վրա:

2. Կայունության եւ անվտանգության տարրերը պետք է համընդգրկուն լինեն՝ ներառելով թե՛ պետական մարմինները, թե՛ քաղաքացիական հասարակության կազմակերպությունները: Մենք պետք է ձգտենք հասնել ավելի խորը համագործակցության ԵՄ անդամ երկրների եւ ԱԼԳ երկրների, ինչպես նաեւ տարածաշրջանային այլ երկրների միջեւ, ինչպիսիք են Ռուսաստանը եւ Թուրքիան, ներառելով նաեւ միջազգային կազմակերպությունները, ինչպես օրինակ՝ Եվրոպայի խորհուրդը եւ ԵԱՀԿ-ն:

3. ԱԼԳ-ը պետք է.

- ա) տրամադրի մեթոդոլոգիական աջակցություն՝ հարեւան երկրների/ժողովուրդների միջեւ առկա երկարատեւ հակամարտությունները լուծելու համար.

բ) մշակի արդյունավետ մեխանիզմներ՝ ԱԼԳ հասարակությունների «պատմական հիշողությունների» հանգամանքը եվրոպական ընդհանուր բանավեճի մեջ ընդգրկելու համար:

4. Զաղաքացիական հասարակության համաժողովը պետք է նպատակ հետապնդի՝ ստեղծել քաղաքացիական հասարակության կազմակերպությունների միավորում, որը կաշխատի տարածաշրջանում անվտանգության եւ խաղաղության հաստատման ուղղությամբ:

5. Տարածքային եւ էթնիկ-տարածքային հակամարտությունների կապակցությամբ ԱԼԳ աջակցությունը պետք է հիմնված լինի ժողովրդավարական սկզբունքների առաջ մղման եւ մարդու ու փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության վրա: ԱԼԳ երկրները տարածաշրջաններում, մասնավորապես՝ չլուծված հակամարտությունների առնչությամբ, պետք է դրսևորեն համագործակցության եվրոպական ըմբռնումը: Բոլոր երկրները եւ նրանց հասարակությունները պետք է դառնան վստահության կերտմանը միտված միջոցառումների մասնակիցը, քանի որ նրանք բոլորն իրենց բնույթով եվրոպական հարեւանության մաս են կազմում: Պետք է կիրառել «ներքեւից վերեւ» մոտեցումը՝ ներգրավելով տարածաշրջանի քաղաքացիական հասարակությանը եւ ժողովրդավարական բոլոր ուժերին: Չլուծված հակամարտությունները չպետք է խոչընդոտեն տարածաշրջանային ԶՅԿ-ների մասնակցությանը ԱԼԳ նախաձեռնություններին:

6. ԵՄ եւ ԱԼԳ երկրները պետք է խրախուսեն Թուրքիայի եւ Ռուսաստանի մասնակցությունը, քանի որ սա կարող է կարելու լինել Արեւելյան գործընկերության հաջողության եւ շահառու երկրների զարգացման համար: Այս երկու կարելու երկրների հարցում հիմք ընդունելով «ներքեւից վերեւ» մոտեցումը՝ Զաղաքացիական հասարակության համաժողովը կարող է դառնալ խիստ բարենպաստ միջավայր՝ «քաղաքացիական դիվանագիտության» իրականացման համար:

7. Բնական ռեսուրսների կառավարման կապակցությամբ պետք է երաշխավորել շրջակա միջավայրի անվտանգությունը եւ պահպանել մարդու՝ առողջ ու անվտանգ միջավայրում ապրելու իրավունքը:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

1. ԵՄ-ը պետք է ինստիտուցիոնալացնի ԶՅԿ-ների՝ որպես ԵՄ եւ ԱԼԳ երկրների լիարժեք գործընկերների դերը՝ ԱԼԳ ծրագրերի մշակման, իրականացման, դիտարկման եւ գնահատման գործընթացում:

2. ԱԼԳ երկրները պետք է մշակեն ԶՅԿ-ների գրանցման եւ քաղաքացիական հասարակության գործունեության՝ ԵՄ չափանիշներին համապատասխանող իրավական դաշտ: ԵՄ-ը պետք է օժանդակի Եւ չափանիշներին ԶՅԿ-ների գործունեության լիակատար համապատասխանությանը՝ ինչպես ամրագրված է Եվրոպայում հասարակական կազմակերպությունների իրավական կարգավիճակի վերաբերյալ անդամ պետությունների Նախարարների կոմիտեի 2007թ. թիվ 14 հանձնարարականում: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել ԶՅԿ-ների կարգավիճակի հարցին. դրանք պետք է լինեն կա՛մ ոչ ֆորմալ կառույցներ, կազմակերպություններ, կա՛մ պետք է ունենան իրավաբանական անձի

կարգավիճակ: ԱԼԳ երկրներում անդամակցության անկախության գնահատման արդյունքները պետք է ներկայացվեն տարեկան հիմունքներով:

3. ԱԼԳ-ը պետք է օժանդակի Եվրոպական հանձնաժողովի եւ Եվրոպայի խորհրդի այն գործունեությանը, որը խթանում է քաղաքական գործիչների, քաղծառայողների, գործարարների, լրագրողների եւ ԶՅԿ առաջնորդների նոր սերնդի համար նախատեսված՝ Եվրոպական արժեքների վրա հիմնված ժողովրդավարական քաղաքացիական կրթությունը:

4. Համաժողովը 4 թեմատիկ պլատֆորմների շրջանակներում եւ դրանցից դուրս խրախուսում է տարբեր երկրներ ընդգրկող նախագծերի մշակումը, որոնցում հատուկ շեշտադրված կլինեն տվյալ տարածաշրջանի առաջ ծառայած հիմնական մարտահրավերները (օրինակ՝ տարածաշրջանային հակամարտությունները, Էներգետիկ քաղաքականությունը, ժողովրդավարությունը, օրենքի գերակայությունը, մարդու իրավունքները, մամուլի ազատությունը, միգրացիան):

5. Համաժողովն առաջարկում է փոքր դրամաշնորհների ծրագրի մշակում, որն արագ եւ ճկուն աշխատանքի սկզբունքով կաջակցի ԱԼԳ երկրների ԶՅԿ-ներին, քանի որ դրանց անդամները հաճախ կարիք ունեն որոշակի ֆինանսական աջակցության՝ գիտաժողովների եւ հանդիպումների մասնակցելու նպատակով ճանապահորդելու եւ նյութեր ու հրապարակումներ պատրաստելու համար:

6. Համաժողովը հանձնարարում է ԱԼԳ երկրների, ԵՄ անդամ պետությունների, ԱՄՆ-ի, Ռուսաստանի, Թուրքիայի եւ գործընկերներ այլ երրորդ երկրների վերլուծական կենտրոնների, լրագրողների եւ մասնագետների համար արդյունավետ, ինտերնետի վրա հիմնված համընդհանուր պլատֆորմի ստեղծում՝ հաղորդակցության, առաջարկների եւ վերլուծությունների փոխանակման նպատակով: Ռուսախոս գործընկերների ներգրավելու նպատակով խորհուրդ է տրվում այդ պլատֆորմում կիրառել ռուսաց լեզուն:

Այս պորտալը պետք է ներառի հետևյալ տարրերը.

- ա) տեղեկատվություն ԱԼԳ շրջանակներում ընթացող երկկողմ եւ բազմակողմ բանակցությունների ծրագրի եւ դրանց առաջընթացի վերաբերյալ,
- բ) տեղեկատվություն Զաղաքացիական հասարակության համաժողովի, դրա անդամների եւ դրա շրջանակներում իրականացվող գործունեության վերաբերյալ,
- գ) ԱԼԳ եւ Զաղաքացիական հասարակության համաժողովի հետ կապված քաղաքականության վերլուծություն եւ առաջարկությունների մշակում,
- դ) ԱԼԳ բազմակողմ եւ երկկողմ գործունեության վերաբերյալ տեղեկատվություն կոնկրետ երկրներից:

7. ԵԶԶԳ արդյունավետ կառավարման ռեսուրսը պետք է բաց լինի մրցակցային հիմքով ԶՅԿ-ների մասնակցության համար, այդպիսով խրախուսելով ԶՅԿ-ներին՝ իրենց նպաստը բերելու կառավարման բարելավման գործընթացին՝ կառավարական գերատեսչություններին վերապատրաստման եւ այլ ծառայություններ տրամադրելու միջոցով:

8. ԱԼԳ-ը պետք է.

- ա) օժանդակի այն ԶՅԿ-ներին եւ անհատներին, ովքեր իրենց հասարակական գործունեության արդյունքում ենթարկվել են

ճնշումների եւ հարձակումների: ԵՄ բոլոր հաստատությունները եւ առանձին անդամ պետությունները պետք է վարեն մարդու իրավունքների եւ ժողովրդավարական արժեքների ու սկզբունքների, եւ ոչ թե՛ կարճատեւ քաղաքական կամ տնտեսական շահերի վրա հիմնված քաղաքականություն:

- բ) զարգացնի տեղական ԶՅԿ-ների՝ արդյունավետ կառավարման ոլորտում խորհրդատվություն տրամադրելու կարողությունները:

9. ԵՄ-ը պետք է ընդլայնի եւ պարզեցնի ԵՄ ֆոնդերի մատչելիությունը ԶՅԿ-ների համար:

ՎԻՉԱՆԵՐԻ ՍՏԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ՊԱՐԶԵՑՈՒՄ ԵՎ ԱԶԱՏԱԿԱՆԱՑՈՒՄ

ԵՄ-ը եւ իր անդամ պետությունները պետք է ԱԼԳ բոլոր վեց երկրներին առաջարկեն ճանապարհային քարտեզներ՝ վիզաներից ազատ ռեժիմի հասնելու համար, հնարավորինս արագ վերացնեն մուտքի արտոնագրերի գանձումները եւ որպես առաջին քայլ՝ տրամադրեն բազմակի մուտքի երկարատեւ վիզաներ:

* * *

Հաշվի առնելով Ռուսաստանում ժողովրդավարության զարգացման կարեւորությունը, Քաղաքացիական հասարակության համաժողովը ԵՄ-ին կոչ է անում մշակել համապատասխան պարտավորություններ Ռուսաստանի քաղաքացիական հասարակության համար, ինչը կհանգեցնի ԵՄ-Ռուսաստան Քաղաքացիական հասարակության համաժողովի ստեղծմանը:

Եւ համաձայնագրերի մանրակրկիտ ուսումնասիրությանը զուգահեռ՝ Քաղաքացիական հասարակության համաժողովը պետք է յուրաքանչյուր երկրի համար հատուկ զեկույցներ պատրաստի ժողովրդավարական կառավարման առաջընթացների վերաբերյալ, որոնցում կներկայացնի ժողովրդավարական կառավարման վերաբերյալ միջազգային չափանիշների եւ համաձայնագրերի համապատասխանության անկախ գնահատականներ:

Արդյունքների մասին տեղեկացնելը. լայն իմաստով, Համաժողովի կայացումը կախված է այն բանից, թե ինչպես են խրախուսվում եւ տեղեկացվում դրա արդյունքները: Իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով՝ արդյունքները պետք է թարգմանվեն ԱԼԳ երկրների լեզուներով: ՉԼՄ-ների վրա սահմանված վերահսկողության առկա պատճենները շրջանցելու գործում ինտերնետը հաղորդակցության կարեւորագույն միջոց է հանդիսանում: Բոլորի եւ առաջին հերթին ԱԼԳ երկրների ԶՅԿ-ների հիմնական խնդիրն է՝ հանրությանն իրազեկ դարձնել Համաժողովի արդյունքներին եւ եվրոպական ինտեգրացիան դարձնել գերակայություն:

Քաղաքացիական հասարակության համաժողովի աշխատանքային գործունեության մի մասը պետք է նվիրված լինի համապատասխան հաղորդակցության ռազմավարության մշակմանը:

**ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾՆՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ
(Բոյունել, 16-17 նոյեմբերի, 2009)
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ 2. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՏԵԳՐԱՑՈՒՄ ԵՎ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՄ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ**

1. Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները (ՔՀԿ) ԵՄ եւ Արեւելյան գործընկերության (ԱԼԳ) երկրների պաշտոնյաների կողմից պետք է ճանաչվեն որպես ԱԼԳ անմիջական շահառուներ: ԱԼԳ գործընկեր կառավարությունները պետք է հանձն առնեն ստեղծել գերատեսչական եւ ընթացակարգային բոլոր անհրաժեշտ պայմանները՝ իրենց երկրներում սոցիալական եւ քաղաքացիական երկխոսությունների արդյունավետ ծավալման համար:

2. Հասարակության կողմից ԱԼԳ նպատակների ճիշտ ընկալումն առանցքային նշանակություն ունի գործընթացի հեռանկարի համար: Առանց քաղաքացիական հասարակության աջակցության՝ գործընկեր երկրների հասարակությունը չի կարողանա ըմբռնել ու ընդունել տնտեսական եւ սոցիալական բարեփոխումների անհրաժեշտությունը, ինչը կարող է բացասաբար անդրադառնալ իր կյանքի վրա:

3. Օրենքի գերակայությունը եւ դատական համակարգի անկախությունը՝ տնտեսության զարգացմանը, ներդրումների եւ տնտեսության աճի ապահովմանն ուղղված գործունեության հիմնական նախապայմաններից են:

4. ԸՀՀ-ը օժանդակում է այն հիմնական նպատակներին, որոնք ամրագրվել են տնտեսության ինտեգրման եւ ԵՄ օրենսդրությանը համապատասխանեցման վերաբերյալ թեմատիկ պլատֆորմներում եւ 2009-2011թթ. համար նախատեսված աշխատանքային ծրագրում: ԸՀԿ-ները դիմում են թեմատիկ պլատֆորմների եւ Խորը եւ համապարփակ ազատ առևտրային տարածքի (ԽՀԱԱՏ) հետ կապված առևտրային ու դրան հարակից կարգավորիչ համագործակցության աշխատանքներում ներգրավվելու համար:

5. ԸՀՀ-ը ԵՄ եւ ԱԼԳ գործընկեր երկրների ուշադրությունը հրավիրում է ԱԼԳ օրակարգում հետեւյալ տնտեսական եւ սոցիալական հարցերն ընդգրկելու անհրաժեշտությանը՝

- ա) ավելի արդյունավետ կարգավորում, վարչական բեռի թեթեւացում, պայքար կոռուպցիայի եւ ստվերային տնտեսության դեմ.
- բ) մարդու իրավունքների, ժողովրդավարական չափանիշների, սոցիալական երկխոսության, օրենքի գերակայության, ինչպես նաեւ աշխատանքային հիմնական նորմերի պահպանման խթանում, այդ թվում՝ անդամակցության ազատություն եւ կոլեկտիվ համաձայնագրերի իրավունք՝ հաշվի առնելով դրանց կարեւորությունը տնտեսական ինտեգրման հարցում.
- գ) մաքսային եւ առևտրային գործընթացների բարելավում՝ կոմերցիոն եւ մաքսային օրենսդրությունները ԵՄ չափանիշներին համապատասխանեցնելու միջոցով.

- դ) Քաղաքացիական հասարակության կողմից համապատասխան օրենքների գործառուության եւ դրանց պահպանման մոնիտորինգի իրականացում.
- ե) աուդիտորական եւ ֆիսկալ վերահսկողության արդյունավետ համակարգերի ներմուծում.
- զ) ԱԳ գործընկեր երկրների եւ ԵՄ անդամ պետությունների միջեւ կրկնակի հարկումից խուսափելու վերաբերյալ համաձայնագրերի ընդունում եւ օտարերկրյա ուղղակի ներդրումների համար բարենպաստ մթնոլորտի ստեղծում.
- է) Սոցիալական ապահովության եւ սոցիալական պաշտպանության համակարգերի կիրառման ապահովում, եւ 2010թ. ընդդեմ աղքատության եւ սոցիալական մեկուսացման եվրոպական տարվա շրջանակներում՝ աղքատության դեմ պայքարում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների դերի բարձրացում.
- ը) ազգային կայուն զարգացման ծրագրում շարունակական զարգացման եւ կլիմայական փոփոխությունների հետ կապված մարտահրավերների արձագանքելու սկզբունքների ներմուծում.
- թ) աջակցություն «կանաչ բիզնեսին»՝ շրջակա միջավայրի համար բարենպաստ ներդրումների, ուսումնասիրությունների եւ մշակումների միջոցով.
- ժ) աշխատանքային ազատ տեղաշարժի պայմանների ապահովում.
- ի) կարճատեւ այցելությունների համար վիզային ռեժիմի պարզեցում (եւ դրա ազատականացում միջին տեւողության այցելությունների համար)՝ հատկապես գործարարության նպատակներով՝ վիզայինից ազատ ռեժիմի անցնելու համար թափանցիկ պայմանների ապահովում.
- լ) աջակցություն այն գործընկեր երկրների ջանքերին, որոնք դեռեւս ԱԶԿ անդամ չեն, բայց պատրաստվում են դառնալ այդպիսին, օժանդակություն նրանց շուկաների մատչելիության ապահովման ռազմավարության մշակմանը եւ դրա պարզեցում ԱԶԿ անդամ երկրների համար.
- խ) համագործակցություն գիտության, տեխնոլոգիայի եւ նորարարությունների ոլորտում՝ FP 7 եւ այլ համատեղ գիտական նախագծերին անդամ երկրների մասնակցության միջոցով, նոր տեխնոլոգիաների ներդրման հնարավորությունների խթանում, մասնավորապես՝ առկա լավագույն տեխնոլոգիաների փոխանցման (տրանսֆերի) կիրառմամբ, որը Եվրոպական հարեւանության քաղաքականության գործիքի Արեւելյան ծրագրի 2007-2013թթ. ռազմավարական փաստաթղթում նախանշված է որպես ներդրումների խթանման եւ փոքր ու միջին բիզնեսի զարգացման համար հիմնական պայմաններից մեկը, ԱԳ անդամ երկրների ընդգրկում Միավորման գործընթացում, որն անցյալ տարի ԵՄ-ի կողմից հռչակվել է որպես Նորարարական քաղաքականության առանցքային բաղկացուցիչ.
- ծ) աջակցություն ԱԳ գործընկեր երկրների քաղաքների եւ շրջանների մերձեցման՝ Twinning ծրագրի, ինչպես նաեւ TAIEX ծրագրի օգտագործմանն ԱԳ նպատակների եւ խնդիրների իրականացման համար, որոնցից է՝

նախագծերի ընտրությանը քաղաքացիական հասարակության մասնակցությունը.

- կ) գործընկեր երկրների կրթական համակարգի համապատասխանեցում ԵՄ չափանիշներին եւ Բոլոնիայի ու Կոպենհագենի գործընթացներին, ուսումնական գործընթացում ՏՏ հնարավորությունների կիրառման խթանում՝ ներառյալ օն-լայն համալսարանները, հեռակա ուսուցումը եւ շարունակական կրթությունը, Եվրոպայի կրթական հիմնադրամի աջակցությամբ որակավորումների ճանաչմանն ուղղված աշխատանքների իրականացում.
- հ) համընդգրկուն ինստիտուցիոն-կառուցողական ծրագիր՝ ներառյալ օժանդակության ցուցաբերում ԶԿ-ներին՝ ԱԼԳ-ում նրանց արդյունավետ դերակատարումը խթանելու նպատակով.
- ձ) Օժանդակություն գործընկեր երկրներին՝ արդար մրցակցության եւ մենաշնորհային դիրքերի չարաշահման դեմ պայքարին ուղղված օրենքների մշակման նպատակով:

6. Շահագրգիռ ԶԿ-ների հետ պարբերաբար խորհրդակցությունները (առեւտրային պալատներ, բիզնես եւ առեւտրային միավորումներ, աշխատանքային միություններ, առեւտրային միություններ եւ ԶԿ-ներ) պետք է դառնան ԵՄ եւ գործընկեր երկրների միջեւ Ասոցացված անդամության համաձայնագրերի (ԱԱԶ) եւ ԽՅԱԿՏ ստեղծման շուրջ ընթացող բանակցությունների բաղկացուցիչ մասը:

7. Գործընկեր երկրների տնտեսությունների յուրաքանչյուր ճյուղի համար պետք է իրականացվի ԽՅԱԿՏ ազդեցության գնահատում: Այն պետք է իրականացվի ԶԿ-ների մասնակցությամբ, եւ արդյունքները պետք է տարածվեն ու հաղորդվեն հանրությանը: ԶԶԳ-ը կոչ է անում արագացնել բանակցությունները:

8. ԱԼԳ-ը պետք է հնարավորություն ընձեռի՝ գործընկեր երկրների միջեւ փոխադարձ առեւտրային եւ տնտեսական համագործակցության հարաբերություններ հաստատելու համար: Այս գործընթացում պետք է ներգրավվեն մասնավոր բիզնեսի ոլորտը եւ բիզնես միավորումները:

9. Օժանդակություն պետք է ցուցաբերվի ԵՄ եւ ԱԼԳ առեւտրի պալատների, գյուղատնտեսական պալատների, գիտական եւ կրթական հաստատությունների միջեւ համագործակցության հաստատմանը: ԵՄ եւ/կամ այլ գործընկեր երկրներում պետք է կազմակերպվի ԱԼԳ բիզնես համաժողով՝ բիզնես փոխհարաբերությունները ամրապնդելու եւ նոր գործընկերությունները խթանելու նպատակով:

10. Օժանդակություն պետք է ցուցաբերվի բիզնեսին եւ ձեռնարկատիրությանը, մասնավորապես փոքր եւ միջին բիզնեսին՝ խորհրդատվությունների, համատեղ վերապատրաստման դասընթացների, մասնագիտական հմտությունների եւ կարողությունների փոխանակման միջոցով, եւ այդ նպատակին պետք է ծառայի փոքր եւ միջին բիզնեսի (ՓՄԲ) զարգացման նախաձեռնությունը: Այն այլոց շարքում պետք է ընդգրկի նաեւ ՓՄԲ զարգացման կենտրոնները, ՓՄԲ միավորումները եւ այլ ցանցեր:

11. Անհրաժեշտ է նաեւ աջակցություն ցուցաբերել սպառողների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպություններին, որպեսզի դրանք կարողանան ավելի արդյունավետ կատարել իրենց դերն ապրանքների անվտանգության ապահովման

եւ տեխնիկական ու սանիտարական նորմերի վերաբերյալ օրենսդրության պահպանման ուղղությամբ:

12. Պետք է մշակվի նոր նախաձեռնություն, որը նպատակ կհետապնդի օժանդակել գործարար կապերին, միջազգայնացմանը եւ շուկաների մատչելիությանը, այդ թվում՝ առեւտրի եւ արդյունաբերական պալատներին ու գործարար միավորումներին վերաբերող know how-ի (արտադրության գաղտնիքների) փոխանցմանը ԵՄ անդամ երկրներից՝ ԱԳ երկրների իրենց գործընկերներին: Ֆինանսավորումը պետք է իրականացվի Եվրոպական բիզնես կազմակերպությունների միջոցով, որոնցից են Եվրոպապալատները, «Բիզնես Եվրոպան» եւ այլն:

13. ԱԳ-ը պետք է գործընկեր երկրներին օգնի ավելի արդյունավետորեն դիմագրավել ճգնաժամի հետեւանքներին՝ տեղեկատվության ու փորձի փոխանակման եւ մակրոտնտեսական աջակցության ծրագրերի հնարավորությունները գնահատելու միջոցով: Պետք է ստեղծվի հակաճգնաժամային միջոցառումների տվյալների շտեմարան, եւ ԶՅԿ-ները պետք է ուսումնասիրեն դրանց իրականացման ու վերականգնման ծրագրերը՝ կիրառելով նաեւ արդյունավետ կառավարման եւ համընդհանուր կառավարման ցուցիչները:

14. Հանրային երկխոսությունը Եվրոպական սոցիալական մոդելի հիմնական առանցքն է եւ միջոց՝ ապահովելու անրաժեշտ կայունությունը տնտեսական բարեփոխումների իրականացման, շուկայական տնտեսությանն անցման, հասարակության ընդհանուր զարգացման եւ կենսակերպի նորմերի բարելավման համար: Այդ երկխոսության համար անհրաժեշտ են ուժեղ ու ներկայանալի աշխատողներ եւ առեւտրային միավորումներ: Հանրային գործընկերներին եւ հանրային երկխոսությանը ցուցաբերվող օժանդակությունը պետք է դառնա ԵՄ եւ ԱԳ անդամ երկրների միջեւ հաստատվող հարաբերությունների մի մասնիկը: Պետք է խրախուսվի նաեւ հանրային գործընկերների տարածաշրջանային պլատֆորմի ստեղծումը:

15. Այս աշխատանքային խումբը համաձայնել է.

Առաջին. պատրաստել առաջարկ մշտական ԱԳ բիզնես ֆորումի կազմակերպման համար, որը կնպաստի ԵՄ եւ ԱԳ անդամ երկրների բիզնես միավորումների եւ ընկերությունների միջեւ կապերի հաստատմանը: ԶՅԿ շահագրգիռ փորձագետների գրանցումը պետք է բաց լինի մինչեւ դեկտեմբերի 31-ը: ԵՄ-Ուկրաինա բիզնես խորհուրդը կպատրաստի օն-լայն քննարկման համար նախատեսված աշխատանքային փաստաթուղթ:

Երկրորդ. վերլուծել գործընկեր երկրներում հանրային երկխոսության ընթացքը եւ առաջարկել այն ավելի արդյունավետ եւ ընդգրկուն դարձնելու միջոցառումներ՝ օգտագործելով ԵՄ գործընկերների փորձը: ԶՅԿ շահագրգիռ փորձագետների գրանցումը պետք է բաց լինի մինչեւ դեկտեմբերի 31-ը: Եվրասիական գործընկերության հիմնադրամը (Վրաստան) կպատրաստի օն-լայն քննարկման համար նախատեսված աշխատանքային փաստաթուղթ:

**ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ
(Բոյունել, 16-17 նոյեմբերի, 2009)
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ 3. ԲՆԱՊԱՐԴԱՆՈՒԹՅՈՒՆ, ԿԼԻՄԱՅԱԿԱՆ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ**

**1. Ինչու ԱԼԳ ԶՀՀ-ը պետք է անդրադառնա Էներգետիկ
եւ բնապահպանական խնդիրներին եւ ինչպես պետք է դա անի**

Հետխորհրդային ժառանգության, ներդրումների պակասի եւ վերջին երկու տասնամյակների բարդ սոցիալ-տնտեսական եւ քաղաքական զարգացումների հետեւանքով ԱԼԳ երկրների Էներգետիկ ենթակառուցվածքները հնացել են: Այս հանգամանքը ԱԼԳ երկրներին եւ նրանց քաղաքացիներին առավել զգայուն է դարձնում կլիմայական փոփոխությունների ազդեցությունների եւ բնական ու մարդկային գրծունեության հետեւանքով առաջացած աղետների սկստմամբ: Էներգետիկ անվտանգությունը, կլիմայական փոփոխությունները եւ շրջակա միջավայրի պահպանությունն, այսպիսով, դառնում են ԱԼԳ շրջանակներում ծավալվող համագործակցության կարեւորագույն ոլորտներ, եւ ԶՀՀ-ը կարող է աջակցել այս խնդիրներով զբաղվող քաղաքացիական հասարակության կազմակերպություններին՝ ցանցերն ընդլայնելու, տեղեկատվության փոխանակմանը նպաստելու, ինչպես նաեւ ԶՀԿ-ների համար համապատասխան տեղեկատվությունն ավելի մատչելի դարձնելու միջոցով: ԱԼԳ ԶՀՀ-ը պետք է աջակցի նաեւ Էներգետիկ եւ բնապահպանական քաղաքականության ոլորտներում տարածաշրջանային համատեղ ձեռնարկությունների հայտնաբերման եւ խթանման գործին:

Շրջակա միջավայրի պահպանության, կլիմայական փոփոխությունների եւ Էներգետիկ անվտանգության համար պատասխանատու ԱԼԳ ԶՀՀ 3-րդ աշխատանքային խմբի ղեկավարը պետք է լինի ԱԼԳ որեւէ երկրից ընտրված կոորդինատորը եւ ունենա ԵՄ որեւէ երկրի ԶՀԿ կամ միջազգային ցանցի անդամ օգնական: Երկուսն էլ պետք է ընտրվեն մեկ տարի ժամկետով (ռոտացիոն սկզբունքով):

Բացի այդ, անհրաժեշտ է ստեղծել ԱԼԳ ԶՀԿ բնապահպանության հարցերով ենթախումբ, որը պետք է հետեւի ԱԼԳ 2-րդ եւ 3-րդ պլատֆորմներով սահմանված գործունեության իրականացմանը: Ի հավելումս, ԱԼԳ 2-րդ եւ 3-րդ պլատֆորմներին օժանդակություն ցուցաբերելու նպատակով անհրաժեշտություն է ծագում ստեղծել բնապահպանական խնդիրներով զբաղվող բազմակողմանի խորհուրդ:

ԱԼԳ կառույցների շրջանակներում քննարկվող նախագծային փաստաթղթերը պետք է հրապարակվեն մինչեւ դրանց ընդունումը՝ քաղաքացիական հասարակությանը հնարավորություն ընձեռնելով գնահատել Էներգետիկ անվտանգության, կլիմայական փոփոխությունների եւ բնապահպանության խնդիրներին առնչվող հեռանկարները: Եվրոպական հարեւանության քաղաքականության տարածաշրջանային ծրագիրը պետք է իրականացնի հրատապ նախագծեր, որոնք վերաբերում են Էներգետիկ անվտանգության (օրինակ՝ ընդհանուր պահեստավորման հնարավորություններ,

երկրողմ փոխմիացումներ, Էներգիայի կոնսերվացում), ինչպես նաև կլիմայական փոփոխությունների եւ շրջակա միջավայրի պահպանության հետ կապած հարցերին:

Եվրոպայի տնտեսական եւ սոցիալական կոմիտեն ողջունում է ԱԳ ԶՅՅ-ի հիմնումը եւ առաջարկում իր մասնակցությունը, քանի որ ԵՏՍԿ-ն ներկայացնում է ԵՄ անդամ պետությունների քաղաքացիական հասարակության կազմակերպությունները:

2. ԱԳ ԶՅՅ-ը Էներգետիկ անվտանգության եւ կլիմայական փոփոխությունների ոլորտում

Այն կալիքներ՝ կապված ԱԳ ազգային կառավարությունների հետ

Անհրաժեշտ է վերականգնել եւ արդիականացնել ԱԳ երկրներում առկա Էներգետիկ ենթակառուցվածքները եւ ներդրումներ կատարել նոր Էներգետիկ հզորությունների շինարարության ոլորտում: Ջերմամատակարարման ցանցերը պետք է վերականգնվեն նոր ջերմակայաններում ներդրումների հնարավորություններ ընձեռող ֆինանսական մեխանիզմների (վարկերի) միջոցով: Բացառությամբ Ադրբեյջանի, ԱԳ երկրները կախում ունեն ներկրվող բնական գազից: Անհրաժեշտ են նախագծեր, որոնք կօգնեն նվազեցնել այդ կախումը, օրինակ՝ այլընտրանքային տարբերակներ առաջարկելով թե՛ աղբյուրների, թե՛ տրանզիտային ուղիների հարցում: Ածխաթթու գազի արտանետումների չափը հետագա 15 տարիների համար պետք է պահպանվի 2008թ. մակարդակի վրա:

Այս նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է վերանայել ԱԳ երկրների Էներգետիկ ռազմավարության ծրագրերը՝ նախապատվություն տալով տեղական վերականգնվող Էներգիայի աղբյուրներին եւ Էներգիայի արդյունավետությանը, ինչպես նաև այնպիսի միջոցառումներին, որոնք նպատակ ունեն համակարգել Էներգիայի պահանջարկը՝ մատակարարումն ավելացնելու փոխարեն (օրինակ՝ վերացնել Էներգիայի սուբսիդավորված սակագները՝ տարբեր միջոցառումների օգնությամբ կանխելով սոցիալական արձագանքը): Միեւնույն ժամանակ, սակագների պլանավորման եւ սահմանման գործընթացում պետք է ապահովել թափանցիկություն, տեղեկատվության մատչելիություն եւ հասարակության մասնակցություն, հատկապես՝ շրջակա միջավայրի վրա դրանց հնարավոր ազդեցություններին վերաբերող հարցերում:

Էներգետիկ անվտանգության ծրագրերը եւ ԱԳ երկրների օրենսդրությունները պետք է աստիճանաբար համապատասխանեցվեն ԵՄ եւ միջազգային նորմերին: Մասնավորապես՝

- Էլեկտրականության եւ գազի շուկային առնչվող օրենքները, ներառյալ դրանց կարգավորման քաղաքականությունը, պետք է մշակվեն՝ նկատի ունենալով Էներգետիկ համընդհանուր համաձայնագրին (Energy Community Treaty) միանալու մտադրությունը.
- Էներգետիկ ոլորտի վիճակագրական համակարգերը պետք է համապատասխանեցվեն Եվրոստատի մեթոդներին.
- Էներգիայի արդյունավետության եւ վերականգնվող Էներգիայի վերաբերյալ օրենսդրությունը պետք է համահունչ լինի ԵՄ կլիմայական փոփոխություններին առնչվող քաղաքականությանը.
- ազգային վերահսկողական մեխանիզմները խթանելիս պետք է միանալ ԵՄ առեւտրային համակարգին, խրախուսել Կիոտոյի արձանագրության մեխանիզմները.
- Էներգիայի կիրառման միջոցները պետք է համապատասխանեն ԵՄ չափանիշներին.

- անհրաժեշտ է կլիմայական փոփոխություններին հարմարեցված ազգային ծրագրերի մշակում:

Ալևակալիքներ՝ կապված տարածաշրջանային քաղաքականության եւ համագործակցության ծրագրերի հետ

ԱլԳ տարածաշրջանի համար անհրաժեշտ է մշակել կայուն էներգետիկ քաղաքականություն, որում հաշվի կառնվեն ազգային շահերը, եւ որը նպատակ կհետապնդի բարելավել շրջակա միջավայրի պահպանությունը, էներգետիկ արդյունավետությունը, ինչպես նաեւ կլիմայական փոփոխություններին արձագանքելու հնարավորությունները եւ նվազեցնել կախումը էներգիայի ներկրումներից կամ միայն մի տեսակի էներգիայի աղբյուրից: Կլիմայական փոփոխությունների նվազեցմանն ուղղված քաղաքականությունը եւ ծրագրերը չպետք է հանգեցնեն բնապահպանական նոր մարտահրավերների, մասնավորապես՝ չպետք է բացասաբար անդրադառնան կենսաբանական բազմազանության վրա:

ԱլԳ շրջանակներում ակնկալվող նոր շուկաների բացումը չպետք է հանգեցնի «էներգետիկ արդյունավետության անկման»: ԵՄ-ում արգելված ոչ արդյունավետ տեխնոլոգիաները չպետք է արտահանվեն ԱլԳ երկրներ:

ԱլԳ-ը պետք է դառնա բանավեճերի ամբիոն միջուկային անվտանգության եւ միջուկային էներգիայի ստեղծման ոլորտում տարածաշրջանային համագործակցության հաստատման համար:

էներգետիկայի համընդհանուր համաձայնագրին ԱլԳ երկրների անդամակցությանը պետք է տրվի նախընտրություն՝ էներգետիկայի ոլորտում փոխըմբռնման հուշագրերին միանալու նկատմամբ:

Վարչական հնարավորությունները, արդյունավետ կառավարումը, թափանցիկությունը եւ սպառողների շահերի պաշտպանությունը պետք է գերակայող լինեն էներգետիկ բնագավառում եւ օժանդակություն ստանան ԱլԳ Յամընդգրկուն ինստիտուցիոն-կառուցողական (ՅԻԿ) ծրագրերի կողմից: Էներգիայի խելամիտ օգտագործման եվրոպական ծրագիրը պետք է տարածում գտնի ԱլԳ երկրներում: Էներգետիկ արդյունավետությունը, առկա լավագույն տեխնոլոգիաների փոխանցումը եւ վերականգնվող էներգիայի օգտագործումը պետք է ճանաչվեն որպես ԱլԳ կարելորագույն նախաձեռնություններ:

ԵՄ անդամ պետությունները եւ ԱլԳ երկրները պետք է համատեղ աշխատանք ծավալեն էներգիայի տարանցման հարցում ավելի մեծ անվտանգության ապահովման ուղղությամբ: Պետք է խթանել Գազի թափանցիկության եվրոպական նախաձեռնությունը (Ֆիզիկական գազի հոսքերի մոնիտորինգ իրական ժամանակում)՝ որպես ԱլԳ փորձնական նախագիծ, որը բաց կլինի երրորդ երկրների համար: ԵՄ եւ ԱլԳ երկրների միջեւ պետք է ստեղծվի էներգիայի ընդհատումների վերաբերյալ արագ նախազգուշացման մեխանիզմ: ԱլԳ գազի տրանզիտային երկրները պետք է ներգրավվեն ԵՄ գազի կորորիկացման եւ նավթի մատակարարման խմբերում, ինչպես նաեւ էներգիայի մատակարարման համընդհանուր անվտանգության խմբում:

ԵՄ-ը պետք է հնարավորություններ ընձեռնի ԱլԳ երկրների համար՝ ներգրավվելու ածխաջրածնային վառելանյութերի տարանցման միջազգային նախագծերում, որոնցից է, օրինակ, էներգիայի հարավային միջանցքը:

3. ԱԼԳ ԶՅՅ խնդիրները բնապահպանության, կենսաբանական բազմազանության եւ գյուղատնտեսության վերաբերյալ

Հիմնական նպատակը պետք է լինի բնապահպանական խնդիրների ընդգրկումն ԱԼԳ երկրների ազգային բոլոր ծրագրերում (օրինակ՝ արդյունաբերություն, տրանսպորտ, տարածաշրջանային զարգացում, բյուջե, գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ԵՄ շրային օրենք): Զանի որ այս նպատակին հասնելու ճանապարհին խիստ կարեւորվում է Բնապահպանության ռազմավարական գնահատման կիրառումը, պետք է ամրապնդել ԱԼԳ երկրների համապատասխան վարչական հնարավորությունները: Բնապահպանությունը եւ կայուն զարգացումը, որպես գերակա ոլորտներ, պետք է ներառվեն Անցացված անդամության համաձայնագրերում: Անհրաժեշտ է խթանել տարածաշրջանային համագործակցությունը եւ բնապահպանական բազմակողմանի համաձայնագրերի իրականացումը:

Հարկ է ստեղծել բնապահպանական տարածաշրջանային տեղեկատվական համակարգ, որն ընդհանուր լինի ԱԼԳ երկրների եւ ԵՄ-ի համար: Օժանդակության է արժանի նաեւ ԱԼԳ շրջակա միջավայրի պահպանության կառավարման վերաբերյալ կարեւորագույն նախաձեռնությունը:

ԱԼԳ երկրներում հատուկ ուշադրության կարիք ունի կորուստների համակարգում՝ ներառյալ դրանց շրջանառությունը եւ վերականգնումը: Առավել լայնորեն պետք է խթանել առկա լավագույն տեխնոլոգիաների փոխանցման սկզբունքը, որը բնապահպանության ոլորտում ներդրումների խրախուսման եւ ՓՄՔ ստեղծման արդյունավետ գործիքներից է: Կլիմայական փոփոխություններին շարունակաբար հարմարեցվելու համատեքստում նախապատվությունը հնարավորինս պետք է տալ կանաչ ենթակառուցվածքների ստեղծմանն ուղղված միջոցառումներին: Հարկ է ուժեղացնել պահպանվող տարածքների վերահսկումը, քանի որ առողջարար Էկոհամակարգերի առկայությունը նպաստում է կլիմայական փոփոխությունների նվազմանը (ածխածնի կրճատում), ինչպես նաեւ դրանց ադապտացմանը (օրինակ՝ անտառները եւ ճահիճները մեղմացնում են կլիմայական փոփոխությունների ազդեցությունը):

Հաշվի առնելով, որ օրգանական գյուղատնտեսությունը եւս նպաստում է CO²-ի արտանետումների նվազեցմանը, օժանդակության պետք է արժանանան ԱԼԳ երկրների գյուղատնտեսական ոլորտում զբաղված հասարակական կազմակերպությունների ներկայացրած փորձնական նախագծերը, եւ բոլոր ԱԼԳ երկրներում պետք է ուժեղացվի Օրգանական գյուղատնտեսության շարժումը: Զանի որ արդեն իսկ փոփոխությունների են ենթարկվել եղանակային պայմանները, գյուղատնտեսական ողջ արտադրանքը եւ գյուղատնտեսության ու գյուղական համայնքների զարգացումը պետք է հարմարեցվի կլիմայական փոփոխություններին՝ լավագույնս կիրառելով օրգանական գյուղատնտեսության փորձը:

4. ԱԼԳ ԶՅՅ առաջարկությունները՝ տեղեկատվության, կրթության, կարողությունների զարգացման եւ իրազեկության բարձրացման վերաբերյալ

ԱԼԳ երկրներն իրենց կրթական համակարգերում պետք է կիրառեն կայուն զարգացմանն ուղղված կրթության սկզբունքները՝ բարելավելով ուսումնական ծրագրերը եւ ստեղծելով ավագ դպրոցների համար նախատեսված հատուկ

ծրագրեր (այդ թվում նաեւ միջազգային «մաստեր» ծրագրեր): ԱԼԳ երկրներում պետք է խրախուսվի շահառուների ներգրավումը եւ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման իրականացումը: Նախապատվությունը պետք է տրվի ԵՄ երկրներից ԱԼԳ երկրներին լավագույն գիտելիքների եւ փորձի փոխանցման գործընթացին՝ հատուկ ուշադրություն դարձնելով Էներգիայի արդյունավետության եւ վերականգնվող Էներգիայի հետ կապված հարցերին՝ ԱԼԳ երկրների համակարգերը ԵՄ չափանիշներին ավելի մոտեցնելու, շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունները նվազեցնելու եւ դեպի կայուն զարգացում անցումն արագացնելու նպատակով: ԱԼԳ բոլոր երկրներում պետք է գործի Օրիուսի համաձայնագիրը:

Հասարակության շրջանում անհրաժեշտ է իրականացնել Էներգետիկ անվտանգության եւ վերականգնվող Էներգիայի վերաբերյալ տեղեկացվածության բարձրացման արշավ՝ օգտվելով ԵՄ փորձից: Բարձրագույն կրթության (համալսարաններ, ինստիտուտներ, ավագ դպրոցներ) ուսումնական ծրագրերը եւս պետք է բարելավել՝ հաշվի առնելով Էներգետիկ անվտանգությանը եւ վերականգնվող Էներգիային առնչվող ծրագրերը:

5. Վերջին նկատառումներ

Վերոնշյալ առաջարկություններն Արեւելյան գործընկերության 3-րդ պլատֆորմի շրջանակներում իրականացվելիք կամ հնարավոր գործողությունների սպառիչ ցանկը չեն: Այնուամենայնիվ, դրանք արտահայտում են Զաղաքացիական հասարակության համաժողովի մասնակից փորձագետների միասնական տեսակետը եւ պետք է համարվեն ելակետ՝ բնապահպանության, կլիմայական փոփոխությունների եւ Էներգետիկ անվտանգության բնագավառներում հետագա գործունեության իրականացման համար:

**ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ
(Բոյունսել, 16-17 նոյեմբերի, 2009)
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ 4. ՄԻՋԱՆՁՆԱՅԻՆ ՇՓՈՒՄՆԵՐ**

ԸՆԴՀԱՆՈՒՐ

1. ԵՄ-ի հետ կապված հարցերի եւ ԵՄ-ի ընձեռած հնարավորությունների վերաբերյալ տեղեկատվության տարածում՝ տեղեկատվական հասարակության խթանման (օրինակ՝ ինտերնետային եւ համակարգչային գրագիտության մատչելիություն) եւ Եվրոպական տեղեկատվական ցանցի ընդլայնման միջոցով:
2. Պատնեշների հաղթահարում եւ մարդկանց միջեւ արդյունավետ կապերի հաստատում՝ խրախուսելով ԱԼԳ երկրների քաղաքացիների լիարժեք մասնակցությունը ԵՄ՝ երիտասարդության, ՉԼՄ-ների, մշակույթի, հետազոտությունների եւ կրթության ոլորտների հետ կապված ծրագրերին:
3. Արձագանքել ԱԼԳ յուրաքանչյուր երկրում ծագող յուրահատուկ իրավիճակներին եւ քաղաքացիական հասարակության զարգացման ընթացքին՝ մասնավորապես, օգտագործելով առաջնորդների համար գործող ցանցերը (ինչպես օրինակ՝ Էվկլիդեսի ցանցը եւ Քաղաքացիական հասարակության առաջնորդների ցանցը)՝ ընդհանուր փոխըմբռնումը եւ համատեղ արժեքները՝ ԱԳ երկրների հասարակական կազմակերպությունների ու ԵՄ անդամ պետությունների միջեւ համագործակցությունն ամրապնդելու նպատակով:

ՎԻՉԱՆԵՐԻ ՍՏԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՎՐԳԵՐԻ ՊԱՐԶԵՑՈՒՄ ԵՎ ԱՉԱՏԱԿԱՆԱՑՈՒՄ

4. ԵՄ-ը եւ նրա անդամ պետությունները պետք է ԱԼԳ բոլոր վեց երկրներին առաջարկեն «ճանապարհային քարտեզներ»՝ վիզաներից ազատ ռեժիմների հասնելու համար, եւ հնարավորինս արագ վերանայեն մուտքի արտոնագրերի համար սահմանված վճարները: Որպես առաջին քայլ՝ պարզեցնել/վերանայել վիզաների ստացման գործընթացները եւ ընձեռել բազմակի մուտքի երկարատեւ արտոնագրեր ստանալու հնարավորություն:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

5. Խրախուսել ԱԼԳ վեց երկրների կառավարություններին՝ օժանդակելու հասուն տարիքում եւ ողջ կյանքի ընթացքում կրթություն ստանալու հնարավորություններին, եւ ընդլայնել Գրունդվիգ (Grundtvig) եւ Կոմենիուս (Comenius) ծրագրերը: Աջակցել ԱԼԳ երկրներին՝ Բոլոնիայի գործընթացին համահունչ բարեփոխումներ իրականացնելու գործում:
6. Ավելացնել դպրոցների փոխանակման եւ հեռակա ուսուցման ծրագրերը, եւ մարզինալ խմբերի ու սահմանափակ հնարավորություններով անձանց համար ապահովել կրթական ծրագրերի մատչելիությունը: Երաշխավորել ԸՀԿ-ների ներգրավվածությունը ԵՄ կրթական ծրագրերում:

7. Նշանակալիորեն ավելացնել երիտասարդների համար կամավորական եւ ստաժավորման աշխատանքային հնարավորությունների ֆինանսավորումը՝ թե՛ որպէս ֆորմալ ուսումնական ծրագրերի մի մաս, եւ թե՛ դրանցից դուրս (սկստի ունենալով բոլոր եվրոպական ուսումնական հաստատությունները, ազգային իշխանությունները, մասնավոր հատվածը եւ հասարակական կազմակերպությունները):

8. ԱԼԳ երկրներում խթանել ոչ ֆորմալ կրթության ճանաչման գործընթացը եւ կապեր ապահովել ոչ ֆորմալ կրթությամբ զբաղվող ԵՄ կազմակերպությունների հետ: Աջակցել ԱԼԳ երկրներին՝ ոչ ֆորմալ կրթության համար որակի գնահատման չափանիշներ մշակելու հարցում:

ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ

9. Խթանել բոլոր մակարդակներում երիտասարդների ակտիվ մասնակցությունը որոշումների ընդունման գործընթացին եւ մշակել մեխանիզմներ՝ ԱԼԳ նպատակների իրականացմանն ուղղված գործունեության մեջ նրանց ներգրավման համար:

10. Խաղաղության եւ միջմշակութային կապերի վերաբերյալ հատուկ ուսումնական ծրագրերի մշակում հետբախումնային տարածքների համար:

11. Աջակցություն ԱԼԳ կառավարություններին՝ երիտասարդների եւ երիտասարդական կառույցների վերաբերյալ ազգային օրենսդրության ընդունման ու ԵՄ չափանիշներին դրա համապատասխանեցման գործում (ինչպէս օրինակ՝ երիտասարդության մասին օրենքը, Հասարակական կազմակերպությունների մասին օրենքը, Կամավորության մասին օրենքը եւ այլն):

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

12. Աջակցություն համատեղ հետազոտական ծրագրերին՝ հետազոտողների ինստիտուցիոնալ ցանցի եւ ուսումնասիրությունների վերաբերյալ անվճար տվյալների շտեմարանի ստեղծման միջոցով:

ՄՇԱԿՈՒՅԹ

13. Խթանել ԵՄ եւ ԱԼԳ երկրների միջեւ մշակութային փոխանակումներն ու համագործակցությունը:

14. Խրախուսել ՅՈՒՆԵՍԿՕ-ի Մշակութային արտահայտման բազմազանության պաշտպանության եւ խրախուսման մասին 2005թ. համաձայնագրի վավերացումը/իրականացումը ԱԼԳ բոլոր վեց երկրներում:

ՉԼՄ

15. Ուսումնասիրել եւ խթանել ՉԼՄ նոր գործիքները եւ ԱԼԳ եւ ԵՄ երկրների միջեւ ստեղծել ոչ ֆորմալ, ինտերնետի վրա հիմնված ՉԼՄ ցանց:

16. Մշակել մեխանիզմներ բոլոր չորս պլատֆորմների շրջանակներում գործող ընթացիկ նախագծերի եւ ծրագրերի վերաբերյալ քաղաքացիական հասարակությանը պարբերաբար իրազեկելու համար, եւ հեռուստատեսության, ռադիոյի եւ տպագիր մամուլի միջոցով օժանդակություն ցուցաբերել տեղեկատվական նախագծերին:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՈՒՐԹ

ԸՆԴՀԱՆՈՒՐ

- Ապահովել լիակատար մասնակցություն երիտասարդների, ՉԼՄ-ների, մշակույթի եւ կրթության ոլորտներում ԵՄ-ում իրականացվող բոլոր նախագծերում:
- Աշխատանքային 4-րդ խումբը հնարավորություններ ունի **աջակցել մյուս երեք աշխատանքային խմբերին**, քանի որ, որպես «մարդուց մարդ» աշխատանքային խումբ՝ այն կարող է խթանել փոխգործողությունները եւ հաղորդակցությունը թե՛ ԱԳ երկրների քաղաքացիական հասարակության շրջանում, թե՛ ԱԳ երկրների ու մնացյալ Եվրոպայի միջև:
- **Չարգացնել տարածաշրջանային համագործակցությունը** ԱԳ երկրների ներսում եւ ԵՄ երկրների հետ, եւ նպաստել տարածաշրջանային փոխըմբռնմանը:
- **Կամրջել տարբերությունները** ԱԳ երկրների ներսում եւ ԱԳ ու ԵՄ երկրների միջև: Նկատի առնել այն մարդկանց, ովքեր կենտրոնական իշխանության հովանու ներքո չեն:
- **Կոռուպցիա**. ԵՄ-ը պետք է նպաստի կրթության ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարին:
- ԱԳ երկրներում նախաձեռնել **Եվրոպայի օրեր/Եվրոպայի շաբաթ** խորագրով միջոցառումներ:
- Նախագծել **Աշխատանքային խմբի գործողությունների ծրագիր** եւ կազմել համագործակցելու պատրաստակամություն դրսեւորող երիտասարդական, առեւտրային եւ այլ կազմակերպությունների ցանկ:
- **Հաղթահարել պատնեշները** եւ ապահովել արդյունավետ շփումներ: Պատնեշ են հանդիսանում՝ **հեռավորությունը**, մեկուսացված շրջաններ, գումարները, կազմել ճանապարհորդական դրամաշնորհների ծրագրեր, նվազեցնել լեզվական խոչընդոտները:
- **Աջակցել քաղաքացիական հասարակությանն** այն երկրներում, որտեղ այն մարզինալ վիճակում է եւ պաշտոնապես ճանաչված չէ:
- Ընդլայնել **քաղաքացիական հասարակությունում գոյություն ունեցող առաջնորդների ցանցերը** (ինչպես օրինակ՝ քաղաքացիական հասարակության առաջնորդների ցանցը, որը զբաղվում է հենց ԱԳ երկրներով, եւ Էվկլիդեսի ցանցը, որը զբաղվում է ողջ Եվրոպայով, ներառյալ ԱԳ երկրները):
- Խթանել եւ զարգացնել **տեղեկատվության հասարակության առաջընթացը** (ինտերնետի համընդհանուր մատչելիություն) տարածաշրջանում, այդ թվում՝ ընդլայնելով **տեղեկատվական ցանցը**:

ՎԻՉԱՆԵՐԻ ՍՏԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՅԵՇՏԱՑՈՒՄ ԵՎ ԱՉԱՏԱԿԱՆԱՑՈՒՄ

- Ազատ տեղաշարժվելու հնարավորություն. վիզայի ռեժիմի պարզեցում եւ հնարավորինս երկարատեւ ազատականացում:
- ԵՄ երկրներում վիզայի ստացման գործընթացների պարզեցում (օրինակ՝ դիմումների ընդունում էլեկտրոնային փոստի միջոցով եւ այլն):
- Վիզաների հետ կապված ֆինանսական բեռի թեթեւացում, թափանցիկության բարձրացում:
- Մարդկանց որոշակի խմբերի համար (օրինակ՝ ուսանողներ եւ ԵՄ ծրագրերի մասնակիցներ) վիզաների ստացման գործընթացի պարզեցում:
- Միջին տեւողության եւ երկարատեւ բազմակի մուտքերի վիզաների տրամադրում:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

- **Շարունակական կրթության** եւ հասուն մարդկանց համար կրթության գործիքների անհրաժեշտություն: **Ոչ ֆորմալ կրթություն** եւ **կրթություն ողջ կյանքի ընթացքում**: Ընդլայնել ԵՄ Գրունդվիգ (Grundwig) ծրագիրն ԱԼԳ երկրներում:
- **Հեռավորության վրա ուսուցման** խթանում:
- **Շրջանների** երիտասարդների համար **տեղեկատվության մատչելիության** խրախուսման անհրաժեշտություն՝ արտերկրում ուսանելու հնարավորությունների ստեղծմամբ:
- **ԵՄ անդամ պետությունների կամավորները** պետք է գևան ԱԼԳ երկրներ՝ երիտասարդների համար վերապատրաստման ծրագրեր իրականացնելու եւ կրթություն ստանալու հնարավորությունները նրանց ներկայացնելու նպատակով. **Եվրոպական կամավորական ծառայություն**:
- ԱԼԳ երկրների համար ԵՄ երկրներում **վերապատրաստվելու հնարավորությունների** ստեղծում:
- **Դպրոցների միջեւ փոխանակման ծրագրեր** (ուսանողներ, աշակերտներ եւ ուսուցիչներ):
- **ԶԻԿ-ների ներգրավում** ԵՄ ուսումնական ծրագրերում:

ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ

- ԱԼԳ երկրներին ծանոթացնել բոլոր մակարդակներում **որոշումների ընդունման գործընթացում** (օրինակ՝ երիտասարդական տեղական խորհուրդներ, երիտասարդների ինքնակառավարում) **երիտասարդներին ներգրավելու** գործում ԵՄ փորձը:
- ԱԼԳ կառավարություններին աջակցել երիտասարդների եւ երիտասարդական կառույցների վերաբերյալ ազգային օրենսդրության ու ռազմավարությունների ընդունման եւ ԵՄ չափանիշների հետ դրանց համապատասխանեցման

հարցում (ինչպիսիք են՝ Երիտասարդության մասին օրենքը, Հասարակական կազմակերպությունների մասին օրենքը, Կամավորականության մասին օրենքը եւ այլն):

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

- **Համատեղ հետազոտությունների** իրականացման անհրաժեշտություն:
- Հետազոտություններ **հումանիտար ոլորտում**:
- ԵՄ եւ ԱԳ երկրների **հետազոտողների ինստիտուցիոնալ ցանց** եւ ուսումնասիրությունների ու հետազոտությունների վերաբերյալ **անվճար տվյալների շտեմարան**:

ՄՇԱԿՈՒՅԹ

- Երկխոսություն ժամանակակից մշակույթի, ինչպես նաեւ **ինքնության եւ պատմական հիշողության** հետ կապված հարցերի շուրջ: Խրախուսել Պատմական ժառանգության մասին ՅՈՒՆԵՍԿՕ-ի 2005թ. համաձայնագրի վավերացումը:
- Խթանել **ԵՄ եւ ԱԳ երկրների մշակույթի գործիչների** միջեւ փոխանակումները եւ համագործակցությունը:
- Խրախուսել ՅՈՒՆԵՍԿՕ-ի Մշակութային արտահայտման բազմազանության պաշտպանության եւ խրախուսման մասին 2005թ. համաձայնագրի վավերացումը/իրականացումը:

ՉԼՄ

- **ՉԼՄ** նոր գործիքների մշակում եւ ԱԳ ու ԵՄ երկրներում մամուլի ոչ ֆորմալ ցանցի ստեղծում:

**Արեւելյան գործընկերության
Քաղաքացիական հասարակության համաժողով
Առաջարկություններ Համաժողովի եւ Ղեկավար կոմիտեի¹²
աշխատանքի վերաբերյալ
Բրյուսել, 28 նոյեմբերի, 2009թ.**

ԶԶԶ-ը ինքնակառավարվող կազմակերպություն է, որին օժանդակություն է ցուցաբերում Եվրոպական հանձնաժողովը:

Դրա մեջ մտնում են Արեւելյան Եվրոպայի ԱԳ երկրների Քաղաքացիական հասարակությունները եւ այդ երկրներում գործող՝ ԵՄ օժանդակությամբ հիմնված միավորումները:

Դրա նպատակն է՝ աջակցել ԱԳ գործընթացին՝ բարձրացնելով դրանում ներգրավված ՀԿ-ների հետ կապված հարցեր, եւ նպաստել ժողովրդավարության հաստատմանն ու մարդու իրավունքների պաշտպանությանը:

Այն պետք է Քաղաքացիական հասարակության ներկայացրած առաջարկները փոխանցի ԱԳ գործընթացներում ներգրավված հաստատություններին եւ որոշումների կայացման պատասխանատուներին:

Համաժողովի արդյունավետությունն ու ներկայացուցչությունն ապահովելու նպատակով առաջարկվում է ղեկավարման ներքոնշյալ կարգը: Այն պետք է ունենա իր սեփական տեսակետը եւ գործելու հնարավորությունները, որոնք հստակորեն կարտացոլվեն որոշումների ընդունման ժամանակ:

Ղեկավար կոմիտեի դերը եւ գործառույթները

Ղեկավար կոմիտեն կազմված է առաջին Համաժողովում մեկ տարի ժամկետով ընտրված 17 ներկայացուցիչներից:

Ղեկավար կոմիտեն լիազույմար նիստում հաստատում է Համաժողովի անդամ ՀԿ-ներին (ընթացակարգը դեռ պետք է որոշվի. գրանցում, թեկնածուների առաջադրում եւ այլն):

Պլատֆորմների համակարգողներ (4 ԱԳ եւ 4 ԵՄ)

Պարտավորությունները.

1. Համաժողովի մասնակիցների կողմից ներկայացվող հանձարարականների մշակում,
2. հաստատությունների կողմից տարբեր պլատֆորմներում բարձրացվող թեմատիկ հարցերի վերլուծություն,

¹² Նախնական մշակման է ենթարկվել աշխատանքային խումբ 5-ի եւ կողմից եւ ձեւավորվել համակարգող կազմի ներկայացուցչությունների ղեկավարների եւ ԵՄ ներկայացուցիչների կողմից:

3. Համաժողովի անդամների համար տեղեկատվության մշակում եւ դրա փոխանցում համակարգողների եւ ԵՄ ներկայացուցիչների միջոցով՝ հաստատությունների եւ ԵՄ պլատֆորմների հետ փոխգործակցելու նպատակով,

4. լոբբինգի իրականացման մեխանիզմների մշակում:

Աշխատանքի մեթոդները.

1. հաղորդակցություն էլեկտրոնային փոստի միջոցով,
2. ինտերակտիվ կայքէջի օգտագործում,
3. խմբի խոսնակի ընտրություն:

Ներկայացուցչության համակարգող-ղեկավարներ (6 ԱԳ եւ 3 ԵՄ)

ԱԳ պարտավորությունները.

1. հավաքել/փոխանցել տեղեկատվություն տվյալ երկրի մակարդակով,
2. տեղում նպաստել Համաժողովի գործունեությանը,
3. առաջարկներ ներկայացնել Ղեկավար կոմիտեին:

ԵՄ պարտավորությունները.

1. հավաքել/փոխանցել տեղեկատվություն ԵՄ մակարդակում,
2. նպաստել Համաժողովի գործունեությանը ԵՄ մակարդակով,
3. հետեւել Համաժողովի ղեկավարման գործընթացին եւ վերահսկել նրա գործունեության արդյունավետությանը,
4. միանալ ԵՄ մակարդակում իրականացվող լոբբիստական աշխատանքներին (դրանք համաձայնեցնելով ԵՄ թեմատիկ համակարգողների հետ),
5. դրա իրականացման ծավալման եւ մոնիտորինգի մասին փաստաթղթի մշակում:

Աշխատանքի մեթոդները.

1. հաղորդակցություն էլեկտրոնային փոստի միջոցով,
2. ինտերակտիվ կայքէջի օգտագործում,
3. խմբի խոսնակի ընտրություն:

Ղեկավար կոմիտեի գործունեությունը

- Հանդիպել տարեկան 3 անգամ՝ հաստատված օրակարգով, որը կազմվում է Համաժողովի հետ համատեղ (հաջորդ հանդիպումները նախատեսվում են 2010թ. հունվարի 22-ին, 2010թ. հուլիսին եւ աշնանը), ԱԳ գործընթացների հետեւող ԵՄ հաստատությունների միջոցառումների հետ զուգահեռ,
- խոսնակների ընտրություն (2 կամ 4), խոսնակների գործառույթների սահմանում,
- ինտերակտիվ կայքէջի օգտագործում:

**Արեւելյան գործընկերության Քաղաքացիական հասարակության համաժողովի ընդգրկվածությունն ապահովելուն ուղղված Եվրոպական հանձնաժողովի առաջարկությունները
Բրյուսել, 15 հունվարի, 2010թ.**

Նախաբան

Հանձնաժողովի՝ Արեւելյան գործընկերությանը նվիրված հաղորդագրության համաձայն՝ (COM(2008)823) Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետագա զարգացմանն օժանդակելու եւ հանրային իշխանությունների հետ նրանց երկխոսությունը խթանելու նպատակով ստեղծվել է Քաղաքացիական հասարակության համաժողով (ԶՀՀ):

ԶՀՀ-ը մեծ հետաքրքրություն է առաջացրել Արեւելյան գործընկերության, ինչպես նաեւ անդամ պետությունների եւ երրորդ երկրների քաղաքացիական հասարակության կազմակերպությունների շրջանում: Հետեւելով 2009թ. հունիսի վերջին հնչեցված կոչին, որով ԶՀԿ-ները հրավիրվում էին արտահայտելու ԶՀՀ-ին մասնակցելու իրենց հետաքրքրվածությունը, սահմանված վերջնաժամկետին ստացվել է մոտ 450 հայտ:

Բյուջետային եւ այլ սահմանափակումների հետեւանքով Հանձնաժողովը հնարավորություն չի ունեցել մասնակցության հրավեր ուղղելու հետաքրքրություն ցուցաբերած բոլոր ԶՀԿ-ներին: Մասնակից կազմակերպություններին ընտրելու եւ Համաժողովի առաջին հանդիպումը նախապատրաստելու նպատակով ստեղծվել է Ղեկավար կոմիտե: Վերջինս, որի կազմում ընդգրկված են ներկայացուցիչներ Եվրամիության նախագահությունից, Հանձնաժողովից, Եվրոպայի տնտեսական եւ սոցիալական կոմիտեից, ինչպես նաեւ անկախ փորձագետներ, ընտրել է մոտ 200 մասնակիցների՝ առաջնորդվելով հետեւյալ չափանիշներով.

- աշխարհագրական ծագում
- բազմազանություն
- փորձառություն Եվրոպական հարեւանության քաղաքականությանը/Արեւելյան գործընկերությանն առնչվող հարցերում:

Այն փաստը, որ որոշ ԶՀԿ-ներ չեն հրավիրվել Համաժողովի առաջին նիստին, չի նշանակում, թե նրանք այլեւս չեն կարող համագործակցել ԶՀՀ-ի հետ:

ԶՀՀ մեկնարկային հանդիպման (2009թ. նոյեմբերի 16-17) մասնակիցներն ընտրել են Ղեկավար կոմիտե եւ հանձնարարել նրան՝ մշակել հաջորդ հանդիպման մասնակիցների ընտրության ընթացակարգը:

Քանի որ ԶՀՀ-ն Արեւելյան գործընկերության մաս է կազմում եւ ԵՀ-ը (համա)ֆինանսավորում է ԶՀՀ հանդիպումներն ու նրա գործունեությունը, այն պետք է մասնակցի ընտրության գործընթացին:

Այսպիսով, Հանձնաժողովը Ղեկավար կոմիտեին հորդորում է մինչեւ 2010թ. հունիսի վերջը ներկայացնել ԶՀՀ հետագա հանդիպումներին եւ գործունեությանը մասնակցելու նպատակով ԶՀԿ-ների ընտրության ընթացակարգը, որը մշակելիս պետք է հաշվի առնել ներքոնշյալ առաջարկությունները:

Հանձնաժողովի առաջարկությունները

Հանձնաժողովը համարում է, որ ընտրության ժամանակ պետք է առաջնորդվել հետևյալ նկատառումներով.

1. Հնարավորության պարագայում բոլոր այն **ԶԿ-ները, որոնք ցանկություն են հայտնել դառնալու ԶՀ գործունեության մասնակից**, անկախ ԶՀ նախկին հանդիպումներին նրանց ներկա գնտվելու փաստից, պետք է հնարավորություն ստանան մասնակցելու Համաժողովի եւ դրա աշխատանքային խմբերի հետագա գործունեությանը: Նրանց համար պետք է հասանելի լինեն ԶՀ-ին կամ դրա աշխատանքային խմբերին, ինչպես նաեւ Ղեկավար կոմիտեին ներկայացված կամ նրանց ընդունած բոլոր փաստաթղթերը: Նրանք պետք է հնարավորություն ունենան նաեւ ընդունված կարգով իրենց տեսակետները հայտնելու այդ փաստաթղթերի վերաբերյալ¹³:

2. Հետաքրքրվածություն արտահայտելու կոչին արձագանքումը կամ ԶՀ մեկնարկային հանդիպմանը ներկա գտնվելու փաստը չի երաշխավորում ԶՀ հետագա գործունեությանը մասնակցելու առաջնահերթությունը: Եվ հակառակը, **մեկնարկային գործունեությանը մասնակից չլինելու փաստը չի բացառում Համաժողովի հետագա աշխատանքներում ընդգրկվելու հնարավորությունը**: Համաժողովի եւ թեմատիկ աշխատանքային խմբերի գործունեությանը մասնակցությունը պետք է լինի ոչ թե մշտական հիմունքներով, այլ՝ մասնակիցների փոխանակման սկզբունքով: Պետք է տարբերակում մտցնել նաեւ ԶՀ-ին անդամակցության (որպես գործընթաց) եւ կոնկրետ հանդիպումներին մասնակցության միջեւ: ԶՀ-ին անդամակցությունը կարող է ԶԿ-ներին հնարավորություն տալ իրենց նպաստը բերելու ԶՀ գործունեությանը նաեւ այլընտրանքային տարբերակներով, օրինակ՝ ինտերնետի կամ ազգային մակարդակում համագործակցության միջոցով: Այս տարբերակը հնարավորություն կտա այն ԶԿ-ներին, որոնք ներկա են եղել Համաժողովի մեկնարկային հանդիպմանը, սակայն ռոտացիայի սկզբունքի համաձայն՝ չեն մասնակցի հաջորդ հանդիպմանը, շարունակել իրենց նպաստը բերել ԶՀ աշխատանքին:

3. Ընտրությունը պետք է լինի թափանցիկ՝ ընտրության չափանիշները հրապարակելու միջոցով: Դրանց համաձայն՝ պետք է պահպանվի հավասարակշռությունը **բազմազանության**¹⁴ եւ **աշխարհագրական ծագման**¹⁵ սկզբունքների միջեւ, իսկ **ԵԶ/ԱԳ հարցերում մասնակիցների ունեցած փորձառությունը** կդիտվի որպես առավելություն: Նախապատվությունը պետք է տրվի այն ԶԿ-ներին, որոնք կկարողանան ապացուցել իրենց գործունեության

¹³ Զանի դեռ ԵՀ-ը կղեկավարի կայքէջը, որում տեղի կունենան կարծիքների փոխանակումներ, նա իրեն իրավունք կվերպահի մերժել այն փաստաթղթերը, որոնք հրահրում են անքաղաքակիրթ վարք (ռասիզմ, ատելություն, բռնություն եւ այլն):

¹⁴ Մասնակիցները պետք է ներկայացնեն ամենատարբեր ոլորտներում գործող ԶԿ-ներ (կամավորական շարժումներ, ամբաստանող միություններ, աշխատանքային միություններ, մասնագիտական միավորումներ, ԶԿ-ներ, հանրային քաղաքականության ինստիտուտներ, շահույթ չհետապնդող հիմնադրամներ, ազգային եւ միջազգային ԶԿ-ներ/ցանցեր եւ նման այլ մասնակիցներ): Ակնկալվում է, որ նրանք իրենց ավանդը կներդնեն ԱԳ բոլոր թեմատիկ ոլորտներում, որոնք են՝ 1. Ժողովրդավարություն, արդյունավետ կառավարում եւ կայունություն, 2. Տնտեսական ինտեգրացում եւ համապատասխանություն ԵՄ քաղաքականությանը, 3. Բնապահպանություն, կլիմայական փոփոխություններ եւ էներգետիկ անվտանգություն, 4. Միջանձնային շփումներ:

¹⁵ ԶՀ մասնակիցների մեծամասնությունը պետք է լինի ԱԳ գործընկեր երկրների ԶԿ անդամ (եւ յուրաքանչյուր գործընկեր երկրի համար պետք է պահպանվի նրանց թվաքանակի հավասարակշռությունը): Բացի այդ, մասնակիցների մի զգալի մաս պետք է լինի ԵՄ անդամ պետություններից եւ միջազգային կազմակերպություններից/ցանցերից, ինչը թույլ կտա ապահովել փորձի փոխանակումը ԵՄ հետ կապված հարցերի/ազգամավարության վերաբերյալ (քանի որ ԱԳ հիմնական նպատակներից մեկն Արեւելյան գործընկերության երկրները ԵՄ-ին մոտեցնելն է): Կարող են հրավիրվել նաեւ ԶԿ-ներ երրորդ երկրներից:

ընդգրկուն բնույթը (**կունենան մասնաճյուղեր եւ ցանցեր**): Կառավարական մարմիններից ՔՀԿ-ների **անկախությունը** նույնպես կարող է ծառայել որպես ընտրության չափանիշ: Պետք է հաշվի առնել յուրաքանչյուր ԱԳ երկրին բնորոշ **յուրահատուկ իրավիճակը** (ՀԿ-ների հիմնադրման իրավական դաշտը եւ այլն):

4. Ընտրության գործընթացը **չպետք է բարդեցված լինի**: Օրինակ, ընթացիկ բոլոր մասնակիցներից չպետք է պահանջվի քվեարկություն, ազգային ընտրական կոմիտեների ստեղծում եւ այլն: Համաժողովի մեկնարկային հանդիպման ժամանակ նշանակված Ղեկավար կոմիտեն այդ առումով պետք է որոշիչ դեր կատարի: Քանի դեռ ԵՀ-ը կլինի ՔՀՀ հանդիպումների (համա) ֆինանսավորողն ու կազմակերպիչը, այն պետք է մասնակցի ընտրության գործընթացին:



ԵՐԵՎԱՆԻ ՄԱՍՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ

www.ypc.am